Օրինականության կառուցվածքը յուրահատուկ է պատկերացնում նաև Մ. Ա. Կոմարովը: Նա օրինականությունը բնորոշում է որպես հասարակության և պետության պահանջ՝ ուղղված յուրաքանչյուրին՝ ամենուր ճիշտ և անշեղ իրականացնելու իրավական նորմերը⁵: Օրինականության բնույթն արտահայտվում է նրա հիմնական գաղափարներում, մասնավորապես՝ օրինականության համընդհանրությունը և միասնությունը, օրենքի գերակայությունը, օրինականության իրականացման անխուսափելիությունը, օրինականության և նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը, օրինականության և մշակութաօգնության անխզելի կապը⁶: Մ. Ա. Կոմարովը, բացի օրինականության հիմնական գաղափարներից, օրինականության կազմում առանձնացնում է նաև երեք գործառույթ. ա) ժողովրդի պետական կամքի կենսագործումը կյանքում, իրավունքի իրականացման և օրինականության կապը, բ) նպատակահարմար, արդյունավետ նորմեր ստեղծելու համար պայմանների ստեղծումը, օրինականության կապն իրավաստեղծագործության հետ, գ) իրավական կարգավորման իրական լինելու ապահովումը, օրինականության կապն իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր բաղադրատարրերի հետ⁷:

Հետազոտողների մյուս խումբն օրինականությունը դիտարկում է որպես համակարգային կազմավորում: Այսպես, Ռ. Ա. Ռոմաշովը և Վ. Վ. Տայանինը, օրինականությունը համարելով բարդ համակարգային հասկացություն, դրա տեսական մոդելը ներկայացնում են օրինականության սկզբունքների, պահանջների և երաշխիքների համակցության միջոցով⁸: Այս մոտեցումը տարբերվում է նախորդներից միայն մեկ բանով, այն է՝ օրինականությունը դիտարկվում է որպես բարդ համակարգ: Մնացած դեպքերում, այսինքն՝ համակարգի կառուցվածքային բնութագրի հարցում, նման է այն տեսաբանների մոտեցմանը, ովքեր օրինականությունը չեն դիտարկում որպես համակարգ, սակայն դրա կառույցը ներկայացնում են որպես սկզբունքների ամբողջություն: Ռ. Ա. Ռոմաշովը և Վ. Վ. Տայանինն օրինականության սկզբունք են համարում դրա իրավական բնույթը, ինչը ենթադրում է իրավունքի ընդհանուր սկզբունքների և օրենսդրորեն ամրագրված իշխանական լիազորությունների անհակասականություն⁹: Սակայն այս մոտեցումը զարգացում չի ստանում, և արդյունքում նրանց թվարկած օրինակա-

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 64-67:

⁵ Տե՛ս **Комаров С.А.** Общая теория государства и права. М., Юрайт, 1997, էջ 366:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 369:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 371:

⁸ Տե՛ս Теория государства и права. Под ред. Р.А. Ромашова. СПб., Издательство Р. Асланова „Юридический центр Пресс“, 2005, էջ 369:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 406-407:

նության սկզբունքների, պահանջների, երաշխիքների շարքում բացակայում են բուն իրավաօրինականությանը վերաբերողները: Հետևաբար, օրինականության նրանց հայեցակարգը և կառույցն ավելի շատ նորմատիվային են, քան իրավաբանական:

Ռ. Ա. Ռոմաշովը և Վ. Վ. Տայանինն օրինականության սկզբունքներն են համարում դրա իրավական բնույթը, միասնությունը, համընդհանրությունը, օրինականության և նպատակահարմարության հակադրման անթույլատրելիությունը: Ինչպես տեսնում ենք, այդ շարքում ուղղակի և հստակ ամրագրված չեն իրավաօրինականությանը վերաբերող սկզբունքները: Ինչ վերաբերում է օրինականության պահանջներին, ապա դրանք բնորոշելիս այս տեսաբաններն ուղղակի նշում են, որ օրինականությունը պետք է դիտարկել որպես իրավական վարքագծի պարտադիր ռեժիմ, որի հիմնական գործառույթը պոզիտիվ իրավունքի պահպանությունն է: Ակնհայտ է նման մոտեցման նորմատիվապոզիտիվիստական ուղղվածությունը, ինչը հաստատվում է նաև օրինականության պահանջների ենթահամակարգի կառուցվածքով, այն է՝ օրենքի գերակայություն, օրենքի առջև բոլորի հավասարություն, իրավական ակտերի անշեղ կատարում և պահպանում բոլորի կողմից, իրավախախտումների դեմ հետևողական պայքար և այլն¹⁰:

Օրինականությունը համակարգ դիտարկող տեսաբաններից է Ն. Վ. Վիտրուկը, որը, օրինականությունը համարելով իրապես գործող իրավունքի համակարգ, դրանում առանձնացնում է երեք բաղադրատարր, որոնք և կազմում են օրինականության (իրավաօրինականության) բովանդակությունը¹¹: Այդպիսի համակարգային մոտեցման հիման վրա Ն. Վ. Վիտրուկն օրինականության բաղադրատարրեր է համարում՝ ա) իրավաօրինականությունը, բ) օրենքների լրիվ իրականացումը (տարբեր ձևերով) պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպությունների պաշտոնատար անձանց գործողություններում, գ) օրինականության պաշտպանության (պահպանության) և ապահովման արդյունավետ համակարգը¹²:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 407-408:

¹¹ Տե՛ս «Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. М., ИКД Зерцало-М, 2001, էջ 161:

¹² Իրավաօրինականությունը, ըստ Ն. Վ. Վիտրուկի, նշանակում է, որ գործող օրենքները ոչ համարժեք են արտահայտում իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ ժողովրդավարական հասարակության և իրավական պետության գաղափարները: Գործնականում իրավաօրինականությունը նշանակում է սահմանադրության և այլ օրենքների համապատասխանությունը միջազգային իրավունքին ու չափանիշներին, մարդու անօտարելի և բնական իրավունքներին: Իրավունքի աղբյուրների համակարգում սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրինականության պաշտպանության համակարգը ներառում է ինչպես օրենքների գործողության նկատմամբ պետական վերահսկողության և հսկողության համակարգը, այնպես էլ անհատների և կազմակերպությունների կողմից անհատական պաշտպանության համակարգը (տե՛ս «Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е. Отв. ред. М.Н. Марченко. Том 3. էջ 161):

Ա. Բ. Լիսյուտկինի մշակած օրինականության համակարգային հայեցակարգն օրինականությունը դիտարկում է որպես համակարգային երևույթ և դրանում առանձնացնում է կառուցվածքային բաղադրատարրեր, բացահայտում վերջիններիս միջև առկա ներհամակարգային կապերն ու փոխադասմանավորվածությունները: Նրա մոտեցումն օրինականությունը որպես համակարգ ներկայացնող այլ հայեցակարգերի հետ համեմատելիս աչքի է ընկնում ամբողջականությամբ և առավել մանրամասն է ներկայացնում օրինականության կառուցվածքային բաղադրատարրերը: Միաժամանակ, Ա. Բ. Լիսյուտկինի օրինականության հայեցակարգը համապատասխանում է իրավաբանական իրավամտաճողության արդի պահանջներին և մերժում է նորմատիվիստական-պոզիտիվիստական մոտեցումներն օրինականության հիմնախնդիրները մեկնաբանելիս: Սակայն օրինականության այս հայեցակարգի հիշյալ հատկությունը չի ամբողջականացվել, չի քննարկվել համակարգային մոտեցման շրջանակներում: Այսպիսի եզրակացության համար հիմք է «սոցիալական արդարության գաղափարի կենսագործումը» որպես օրենսդրության պահպանման և կատարման նպատակ դիտարկելը¹³: Բացի այդ, վերջինս օրինականության սկզբունք է համարում մարդու և քաղաքացու իրավունքների երաշխավորվածությունը: Այս երկու հանգամանքներն անուղղակիորեն հիմք են տալիս պնդելու, որ օրենքները պետք է լինեն իրավական, արդյունքում օրինականությունը ձեռք կբերի նաև իրավական բնույթ: Այսպիսով՝ Ա. Բ. Լիսյուտկինի օրինականության հայեցակարգը թերի է, որովհետև մինչև վերջ չեն համադրվել օրինականությունը որպես համակարգ մոտեցումը և իրավական օրինականության գաղափարը: Արդյունքում նա օրինականության կենտրոնական բաղադրատարրը՝ նպատակը, մեկնաբանում է միայն որպես բոլոր անձանց կողմից գործող օրենսդրության խիստ և անշեղ պահպանում ու կատարում:

Օրինականությունը որպես համակարգ է դիտարկում նաև Ռ. Տ. Մուխանը¹⁴: Նրա մոտեցումն օրինականությունը որպես համակարգա-

¹³ См. в Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько. М., Юристъ, 1999, էջ 515:

¹⁴ Ռ. Տ. Մուխանն օրինականությունը բնորոշում է որպես հասարակական-քաղաքական կյանքի ռեժիմ, հասարակական հարաբերությունների իրավաչափության կացություն հիմնված իրավունքի և սոցիալական արդարության գերիշխանության վրա, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի անշեղ պահպանմամբ, օգտագործմամբ և կիրառմամբ: Այս ընկալմամբ օրինականությունն ունի դրսևորման, իրականացման երեք ձև. առաջին՝ որպես սոցիալական սուբյեկտների գործունեության սկզբունք, երկրորդ՝ որպես հասարակության և պետության պահանջ՝ ճշգրիտ իրացնելու գործող օրենսդրությունը: Օրինականության բովանդակությունն արտահայտում են նրա սկզբունքները, որոնք իրենց հերթին արտահայտվում են իրավունքի բոլոր սուբյեկտներին ներկայացվող պահանջների համակարգում: Օրինականության իրացման գրավականը դրա երաշխիքներն են (տե՛ս **Мухаев Р.Т.** Теория государства и права. М., Издательство ПРИОР, 2001, էջ 434-440):

յին կազմավորում դիտարկող այլ դիրքորոշումներից տարբերվում է այն բանով, որ նա օրինականության համակարգի կառուցվածքային բաղադրատարր է համարում այն գործառույթները, որոնք օրինականությունը կատարում է հասարակության մեջ, և որոնք արտահայտում են օրինականության դերն ու նշանակությունը¹⁵: Նա օրինականությանը վերագրում է երեք գործառույթներ

ա) իրավական կարգավորման կառուցակարգի արդյունավետության ապահովում:

բ) հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմության նպատակներին, ազատության, հումանիզմի և արդարության գաղափարներին համապատասխանող օրենսդրության ստեղծման համար պայմանների ձևավորում:

գ) իրավունքների և ազատությունների անշեղ իրականացման պայմանների ստեղծում դրանց պաշտպանությունը երաշխավորող նյութական, կազմակերպական և իրավաբանական միջոցների սահմանման ճանապարհով:

Այսպիսով, Ռ. Տ. Մուխանն օրինականության գործառույթները ներկայացնում է առավել լայն հիմքերի վրա, և այդ տեսանկյունից նրա մատնանշած գործառույթները համահունչ են իրավական օրինականության հայեցակարգին, քանի որ իրավական օրինականության սկզբունքի առաջին բաղադրիչն իրավունքի և նրա պահանջների իրականացումն է պոզիտիվ իրավունքում: Այս տեսաբանի բացթողումը կարելի է համարել այն, որ նա, ըստ էության կողմնակից լինելով իրավական օրինականության գաղափարին, իր հայեցակարգը չի անվանում իրավական օրինականություն, և արդյունքում նա իրավական օրինականությունը չի տրոհում երկու ենթահամակարգերի՝ իրավաօրինականության և օրինականության:

Օ. Ֆ. Սկակունն օրինականության իր հայեցակարգը չի ներկայացնում համակարգային: Այսինքն՝ հստակ չի մատնանշում, որ օրինականությունը համակարգային կազմավորում է, սակայն նրա մոտեցումն ունի առավելություններ օրինականությունը համակարգային կազմավորում դիտարկող այլ տեսաբանների մոտեցումների համեմատ: Նա, ինչպես և Ն. Վ. Վիտրուկը, ընդունում է իրավական օրինականություն հասկացությունը: Ըստ նրա՝ օրինականությանը բնութագրական է երկու հատկանիշների միասնություն՝ ա) ներքին (ձևական)՝ որպես բուն օրինականություն, բ) արտաքին (եական)՝ որպես իրավաօրինականություն: Արդյունքում՝ Օ. Ֆ. Սկակուննի օրինականության հայեցակարգը վերածվում է իրավաբանական-բովանդակային հայեցակարգի, և օրինականության սկզբունքները, պահանջներն ու երաշխիքները դիտարկվում ու կառուցվում են իրավաօրինականության և բուն օրինականության տարանջատման համատեքստում, ինչը հստակ չի

¹⁵ Ст' у Myxaeb P.T. նշվ. աշխ., էջ 441:

արտահայտել օրինականության տեսության հիմնահարցերն իմաստավորաձև որևէ հեղինակ: Այսպիսով, իրավաբանական իրավահասկացության դիրքերից Օ. Ֆ. Սկակունի օրինականության հայեցակարգն առանձնանում է իր հետևողական իրավաբանական մոտեցմամբ: Սակայն կարծում ենք, որ այս հայեցակարգը պետք է լրացվի համակարգային մոտեցմամբ՝ օրինականությունը համարելով համակարգ իրեն բնորոշ բաղադրատարրերով:

Ամփոփելով օրինականությունը համակարգ դիտարկող հայեցակարգերի քննարկումը՝ կարող ենք ասել, որ այդ հայեցակարգերն ակնհայտ առավելություն ունեն այն մոտեցումների նկատմամբ, որոնք օրինականությունը չեն դիտարկում համակարգ: Սակայն օրինականությունը որպես համակարգային կազմավորում դիտարկող հայեցակարգերը որոշակի վերակառուցման կարիք ունեն երկու ուղղությամբ. առաջին՝ իրավաբանական իրավահասկացության դիրքերից, երկրորդ՝ համակարգերի տեսության մեջ մշակված համակարգի բնութագրի և կառուցվածքի դիրքերից:

Համակարգերի տեսության մեջ համակարգի կառույցը և գործառույթավորումը բնութագրելիս օգտագործում են հետևյալ հասկացությունները՝ բաղադրատարր, ենթահամակարգ, կառուցվածք, կացություն, վարքագիծ, հավասարակշռություն, զարգացում, օրինաչափություններ և այլն: Այսպիսով՝ իրավական օրինականությունը որպես համակարգ ներկայացնելիս ելակետային պետք է համարել համակարգերի տեսության մշակված հիմնադրույթները և հասկացությունները՝ որոշակիացնելով դրանք օրինականության հիմնախնդիրների համատեքստում:

Իրավական օրինականությունը՝ որպես իրավունքի և իրավական կարգավորման համակարգի համընդհանուր կազմակերպական գործառույթային սկզբունք, հանդես է գալիս որպես համակարգ: Անշուշտ, ավելի ընդհանրացված իրավական մետահամակարգերում այն կատարում է ենթահամակարգի դեր: Սակայն, լինելով համակարգ, այն ունի համակարգին բնորոշ ներքին կառուցվածք, որում ըստ ստորակարգության (որոշակիորեն՝ պայմանական) կարելի է առանձնացնել հետևյալ բաղադրատարրերը՝ իրավական օրինականության նպատակը, ենթահամակարգերը, ենթանպատակները և համապատասխանաբար՝ ենթագործառույթները, ամեն մի ենթահամակարգին բնորոշ ներքին կառուցվածքային բաղադրատարրերը (սկզբունքներ, պահանջներ) և իրավական օրինականության (իրավաօրինականության և օրինականության) նպատակների, սկզբունքների, պահանջների իրացման կառուցակարգը (կամ երաշխիքները):

Իրավական օրինականության նպատակը համահունչ է իրավունքի և իրավական կարգավորման նպատակներին, բխում է դրանցից, որոշակիացնում այն: Այդպիսին կարելի է համարել իրավունքի և դրա պահանջների կենսագործումը, իրականացումը հասարակական հարաբե-

րությունների մասնակիցների վարքագծում: Այս ընդհանուր նպատակն իր հերթին տրոհվում է երկու ենթանպատակների (համապատասխանաբար ենթագործառույթների), որովհետև իրավունքի՝ որպես օբյեկտիվ էության և հասարակական հարաբերությունների մասնակիցների փաստական վարքագծի միջև գտնվում է պոզիտիվ իրավունքը կամ օրենսդրությունը: Այդպիսով լայն իմաստով օրինականությունը որպես համակարգ տրոհված է երկու փոխկապված ենթահամակարգի՝ իրավաօրինականության և բուն (կամ նեղ իմաստով) օրինականության:

Իրավաօրինականության՝ որպես ենթահամակարգի նպատակը միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվացումն է: Այդ նպատակը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավաստեղծ մարմիններին՝ պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները, պահանջները, սկզբունքները և ընդունել միայն իրավական բնույթի նորմատիվ ակտեր: Այս ենթանպատակին համապատասխան՝ իրավաօրինականության ենթագործառույթն է ստեղծել պայմաններ հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, սոցիալական առաջադիմությանը, ազատության, արդարության և հումանիզմի գաղափարներին համապատասխանող պոզիտիվ իրավունքի կամ օրենսդրության ձևավորման համար: Իրավաօրինականությանը՝ որպես իրավական օրինականության ենթահամակարգ, բնորոշ են իր սկզբունքները, պահանջները և, իհարկե, իրավաօրինականության նպատակների (նաև դրանցով պայմանավորված սկզբունքների, պահանջների) իրականացման կառուցակարգը կամ այլ կերպ ասած՝ իրավաօրինականության երաշխիքները:

Օրինականության ենթանպատակն արդեն իրավունքի իրականացման ոլորտում իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից գործող օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը բարեխիղճ և անշեղ պահպանելն ու կատարելն է: Այդ նպատակը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավունքի բոլոր սուբյեկտներին՝ անշեղորեն և խստորեն կենսագործելու գործող պոզիտիվ իրավունքի բոլոր նորմերը, կարգադրագրերը: Այս ենթանպատակին համապատասխան՝ օրինականության գործառույթն է՝ ապահովել պայմաններ իրավական կարգավորման կառուցակարգի իրավաչափ և արդյունավետ գործողության համար: Ինչպես և իրավաօրինականությունը, օրինականությունը ևս որպես ենթահամակարգ ունի իրեն հատուկ սկզբունքները, պահանջները և երաշխիքները, որոնք կոչված են ապահովելու պոզիտիվ իրավունքի պահանջների կենսագործումը:

Այսպիսով իրավական օրինականության համաիրավական և համընդհանուր սկզբունքի՝ որպես համակարգի առաջին ենթահամակարգը **իրավաօրինականությունն է**, իսկ վերջինիս կառուցվածքում առանձնանում են դրա սկզբունքները, դրանցով պայմանավորված իրավաօրինականության պահանջները և երաշխիքները:

Իրավաօրինականությունն իր ենթանպատակին, այն է՝ իրավունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվացումը, համապատասխանորեն՝ ունի իր սկզբունքները: Իրավաօրինականության սկզբունքի բաղադրատարրերն այն հիմնական գաղափարները, ելակետային դրույթներն են, որոնք որոշում են իրավաօրինականության բովանդակությունը¹⁶:

Իրավաօրինականության պահանջները բխում են իրավաօրինականությունից, այսինքն՝ դրանք ընդհանուր ձևակերպված իրավական կարգադրագրեր են, որոնց պահպանումը, կատարումը երևույթը դարձնում են օրինական¹⁷:

Իրավաօրինականության սկզբունքների և պահանջների հարաբերակցության հարցում պետք է համաձայնվել Վ. Ս. Աֆանասևի այն մտեցմանը, որ իրավաօրինականության յուրաքանչյուր սկզբունք վերածվում է պահանջների համակցության: Ճիշտ է, նա այդ հանգամանքը հիմնավորում է օրինականության, այլ ոչ թե իրավաօրինականության հայեցակարգի համար, սակայն սկզբունքների և պահանջների հարաբերակցությունն ընդունելի է նաև իրավական օրինականության համար: Այդպիսով՝ ընդհանուր սկզբունքը վերածվում է կոնկրետ իրավական պահանջների, նորմերի, ինչը «թույլ է տալիս որոշել այդ պահանջների հստակ շրջանակը, իրականացնել դրանց նորմատիվ ամրագրում և որոշակիացում», որոնք լրացուցիչ երաշխիքներ են ստեղծում իրավաօրինականության համար:

Իրավաօրինականության ամենաընդհանուր սկզբունք կարելի է համարել իրավունքի գերակայությունը: Այդ սկզբունքի էությունն այն է, որ հասարակական հարաբերությունների համընդհանուր կարգավորման պայմաններում օրենքները և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավունքի գաղափարին, օբյեկտիվ էությանը, «իրերի իրավական բնույթին»: Օրենքներում և այլ նորմատիվ ակտերում պետք է ամրագրվեն մարդասիրական, արդարացի իրավական լուծումներ ու կարգադրագրեր: Միայն հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, հիմնական իրավական բովանդակային սկզբունքներին, ազատության, մարդասիրության և արդարության գաղափարներին համապատասխանող օրենսդրությունն է ապահովում իրավական կարգավորման նպատակները: Իրավունքի գերակայության սկզբունքը «նոր աշխարհակարգի և արդի ժողովրդավարության սահմանադրական կարգերի հիմքն է: Նրա այլընտրանքն իրավազրկությունն է և սոցիալական քառսը»¹⁸:

¹⁶ Օրինականության տեսությանը նվիրված իրավաբանական գրականության մեջ առկա են միայն օրինականության սկզբունքների և պահանջների բնորոշումները: Մեթոդաբանական տեսանկյունից դրանք ընդունելի են նաև իրավաօրինականության համար:

¹⁷ См и Общая теория права и государства. Под ред. В.В. Лазарева. М., Юристъ, 2005, էջ 314:

¹⁸ Зорькин В. Д. Верховенство права и конституционное правосудие.- В кн. Наш

Իրավունքի գերակայությունը՝ որպես իրավաօրինականության սկզբունք, իրավական կարգավորման առաջին երկու՝ իրավունքի կազմավորման և իրավաստեղծագործության փուլերում վերածվում է երկու խումբ պահանջների, որոնք ներկայացվում են՝

- ա) իրավաստեղծագործության բովանդակությանը,
- բ) իրավաստեղծ գործունեության ընթացակարգին և ձևին:

Այդ պահանջների մեծ մասն արդի ժողովրդավարական իրավական համակարգերում սահմանադրական կամ օրենսդրական ամրագրում են ստացել: Մասնավորապես, Հայաստանի երրորդ Հանրապետության սահմանադրական զարգացման ընթացքում կիրառվել են իրավունքի (մարդու իրավունքների) գերակայությունն արտացոլող մի շարք նորմեր, որոնք կարելի է համարել իրավաստեղծագործության բովանդակությանը (նաև իրավակիրառմանը) ներկայացվող պահանջների համակցություն.

1) Մարդու իրավունքներն անօտարելի են և ի ծնե պատկանում են նրան (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդ. 1):

2) Մարդու ազատությունը, իրավահավասարությունը և արժանապատվությունն իրավական կարգավորման նպատակն են (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան):

3) Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն են (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 3, 1-ին մաս):

4) Մարդու իրավունքների ճանաչումը, պահպանումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն են:

5) Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 3, 3-րդ մաս):

6) Մարդու արժանապատվությունն անխախտելի է (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 23):

7) Բոլորը հավասար են օրենքի առջև (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 28):

8) Հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 81, 2-րդ մաս):

9) Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա

трудный путь к праву: Материалы философско-правовых чтений памяти академика В.С. Нерсисянца. Сост. В.Г. Графский. М., Норма, 2006, с. 12.

գործող մարմինների պրակտիկան (ՀՀ Սահմանադրություն, հոդ. 81, 1-ին մաս)¹⁹ և այլն:

Իրավունքի գերակայության այս պահանջները կարելի է շարունակել, սակայն թվարկվածներն էլ բավարար են հասկանալու համար, որ դրանք կոչված են ապահովելու օրենքների և այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունն իրավունքին, համամարդկային իրավական բովանդակային սկզբունքներին, մարդու իրավունքներին և, իհարկե, Սահմանադրությանը՝ որպես ներպետական իրավունքի առաջին պոզիտիվ աղբյուրի: Թվարկված պահանջների մեջ գերակշռում են մարդու իրավունքները, սակայն հետևողական մոտեցման դեպքում դա նույն իրավունքի գերակայության սկզբունքի դրսևորումն է: Այստեղ միանշանակ պետք է համաձայնվել Վ. Ս. Ներսեսյանցի հետ, ըստ որի՝ «իրավունքը և մարդու իրավունքները ոչ թե տարբեր (իրենց էությանմբ, գործառույթներով և նշանակությամբ) ֆենոմեններ են, որոնք ունեն իրարից անկախ կյանք, այլ սկզբունքորեն միևնույն կարգի և միևնույն տիպի երևույթներ են: Մարդու իրավունքներն ամեն մի իրավունքի անհրաժեշտ, անօտարելի, անխուսափելի բաղադրատարրն են, իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորման յուրահատուկ ձևի և տիպի էության որոշակի (հենց սուբյեկտային-մարդկային) առումն են: Իրավունքն առանց մարդու իրավունքների նույնպես անհնարին է, ինչպես և մարդու իրավունքներն առանց իրավունքի՝ իրավունքից դուրս»²⁰: Գ. Գ. Հարությունյանը և Մ. Բ. Բազալյը ևս իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակությունն են համարում մարդու բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների գերակայությունը և անմիջական գործողությունը²¹:

Իրավունքի գերակայության սկզբունքից բխող և իրավաստեղծագործության ընթացակարգին ու ձևին ներկայացվող պահանջներն ամբողջով են ՀՀ Սահմանադրությամբ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Վերջինս՝ որպես իրավաստեղծ տեխնիկայի կանոնների աղբյուր, կարգավորում է այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են՝ իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, ի-

¹⁹ Սահմանադրական այս և մի շարք այլ դրույթներից բխում է, որ սահմանադրությունն ի սկզբանե ճանաչվում է իրավական: Ուստի այն օրենքների լեգիտիմության հենակետն է, իրավական և ոչ իրավական օրենքների տարբերակման իրավաբանական հիմքը և բարձրագույն երաշխիքը (տե՛ս **Лившиц Р.З.** О легитимности закона // Теория права, новые идеи, вып. 4-ий, М., РАН, 1995, էջ 20):

²⁰ **Нерсесянц В.С.** Философия права. М., 1997, с. 376.

²¹ Տե՛ս **Арутюнян Г.Г., Баглай М.Б.** Конституционное право: Энциклопедический словарь. М., Норма, 2006, էջ 63: Ըստ այս հեղինակների՝ իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները և ազատությունները պետությունը ճանաչում է որպես բարձրագույն արժեք, ժողովուրդը և պետությունն իշխանությունն իրականացնելիս սահմանափակված են այդ իրավունքներով, որոնք համարվում են անմիջականորեն գործող և որոշում են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործունեության իմաստը և բովանդակությունը: Իրավունքի գերակայության սկզբունքի կոչումը ոչ իրավական օրենքների ընդունման և գործողության բացառումն է:

րավական ակտերի նախագծերի նախապատրաստման կարգը, իրավական ակտերի նախագծերի փորձաքննության և պետական գրանցման հարաբերությունները, օրենսդրական տեխնիկայի կանոնները և այլն:

Ինչպես օրինականությունը, այնպես էլ իրավասօրինականությունն ունեն իրենց երաշխիքները: Ըստ Ա. Բ. Լիսյուտկինի՝ օրինականության բոլոր բաղադրատարրերը, սկսած նպատակից մինչև իրավաբանական հիմքերը, շատ կարևոր համակարգային դեր են խաղում, սակայն բավարար չեն օրինականությունը կենսագործելու համար: Օրենքներն առանց իրացման կառուցակարգի, օրինականությունն առանց երաշխիքների նման են հոչակագրային կարգախոսի: Ուրեմն օրինականության համակարգը և տեսական կառույցն անպայման պետք է ներառեն այդ միջոցների, հնարքների և պայմանների ամբողջությունը, իսկ օրինականության ամեն մի տեսություն պետք է մշակի այդ հիմնախնդիրը²²: Դրանք շատ դեպքերում նույնն են երկուսի համար էլ, սակայն իրավասօրինականության երաշխիքներն ուղղված են իրավական օրենքների և իրավական բնույթի այլ նորմատիվ ակտերի ընդունմանը և դրանց գործողության մեջ մտնելուն, իսկ անհրաժեշտ դեպքերում՝ նաև գործողության մեջ մտնելուց հետո դրանք անվավեր հայտարարելուն: Այդ երաշխիքները և իրավասօրինականության իրացման կառուցակարգերը բազմազան են՝ սկսած քաղաքացիական հասարակության հայեցակարգից մինչև իրավական պետության տեսությունն²³ իր բոլոր ինստիտուցիոնալ հնարավորություններով, մասնավորապես՝ ժողովրդաիշխանության սկզբունքը, պետական իշխանության լեգիտիմությունը, իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը, գործադիր իշխանության ենթաօրենսդրականությունը, սահմանադրական վերահսկողությունը, ընդհանուր դատական վերահսկողությունը, դատախազական գործունեությունը (որոշ երկրներում), իրավաստեղծ գործունեության ձևականացված և հստակ իրավական կարգավորումը, իրավախախտ օրենսդրության դեմ պայքարի միջազգային համընդհանուր և տարածաշրջանային համակարգերը և այլն: Այդ երաշխիքներն իրենց գործողության ոլորտով կարող են լինել ընդհանուր, օրինակ՝ իշխանությունների բաժանումը կամ սահմանադրական վերահսկողությունը, և ճյուղային: Օրինակ՝ քրեական դատավարության վերաբերյալ սահմանադրական նորմերը և բուն քրեական դա-

²² См. у Теория государства и права. Под ред. Н.И. Матузова и А.В. Малько, էջ 514:

²³ ՀՀ Սահմանադրության հիմքում ընկած կարևորագույն հայեցակարգերից մեկն իրավական պետության տեսությունն է: Սահմանադրության մեջ իրենց նորմատիվ ամրագրումն են ստացել իրավունքի տեսության մեջ մշակված իրավական պետականության բոլոր երեք հիմնական բաղադրիչները՝ ա) հումանիտար-իրավական (մարդու և քաղաքացու բնական իրավունքներն ու ազատությունները, դրանց ճանաչումն ու պաշտպանությունը), բ) նորմատիվ-իրավական (գործող իրավունքի բոլոր ձևերին ներկայացվող պահանջները և դրանց սահմանադրական-իրավական բնույթը), գ) ինստիտուտային-իրավական իշխանությունների տարանջատման և փոխգործողության համակարգը (տե՛ս **Нерсесянц В.С.** Философия права, М., 1997, էջ 372-373):

տավարության օրենսգրքում ամրագրված սկզբունքները կողմնորոշիչ և ղեկավար նշանակություն ունեն օրենսդիր մարմնի համար մասնավոր դատավարական նորմեր ստեղծելիս: Այդ երաշխիքների համակարգում գլխավոր դերակատարն անկախ դատական իշխանությունն է՝ որպես իրավական օրինականության և իրավունքի գերակայության սկզբունքի պահանջների կենսագործման գլխավոր երաշխավոր²⁴: Այսպիսով՝ իրավաօրինականության, այսինքն՝ իրավական ակտերի իրավականության ապահովման կառուցակարգերից ամենագլխավորն անձանց իրավունքն է՝ դատարանում բողոքարկելու բոլոր տեսակի իրավական ակտերը, անհատականները հայցային վարույթի կարգով, նորմատիվները՝ հատուկ հայցային վարույթի կարգով, և օրենքների սահմանադրականության ստուգումը՝ Սահմանադրական դատարանի միջոցով:

Այսպիսով, իրավաօրինականության՝ որպես իրավական օրինականության համընդհանուր սկզբունքի կառուցվածքի բաղադրիչներ են՝ նպատակները, ենթահամակարգերը, ենթանպատակներն ու ենթագործառույթները, ամեն մի ենթահամակարգի ներքին բաղադրատարրերը (սկզբունքներ, պահանջներ) և դրանց իրացման կառուցակարգը (կամ երաշխիքները): Իրավական օրինականության նպատակն է իրավունքի կենսագործումը հասարակական հարաբերությունների մասնակիցների վարքագծում: Իրավաօրինականության նպատակը միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունների ու պահանջների պոզիտիվացումն է, որը վերածվում է անհրաժեշտ պահանջի՝ ուղղված իրավաստեղծ մարմիններին՝ պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները և ընդունել միայն իրավական բնույթի նորմատիվ ակտեր: Դրան համապատասխան՝ իրավաօրինականության գործառույթն է պայմաններ ստեղծել հասարակական հարաբերությունների օբյեկտիվ բնույթին, ազատության, արդարության և հումանիզմի գաղափարներին համապատասխանող օրենսդրության ձևավորման համար: Իրավաօրինականության իրացման երաշխիքները միջոցների, հնարքների և պայմանների ամբողջություն են, որոնք կոչված են ապահովելու իրավական բնույթի նորմատիվ ակտերի ընդունումը և գործողության մեջ մտնելուց հետո անհրաժեշտ դեպքերում նաև դրանց գործողության կասեցումը, դրանց անվավեր հայտարարումը և վերացումը: Իրավաօրինականության սկզբունքն է իրավունքի գերակայությունը, որն իրավունքի կազմավորման և իրավաստեղծագործության փուլերում վերածվում է երկու խումբ պահանջների՝ իրավաստեղծագործության բովանդակությանը ներկայացվող պահանջներ, իրավաստեղծ գործունեության ընթացակարգին և ձևին ներկայացվող պահանջներ:

²⁴ Այդ տեսակետն է պաշտպանում նաև Գ. Գ. Հարությունյանը (տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, էջ 54):

СЕРГЕЙ КОЧАРЯН – Системная структура правозаконности как элемента фундаментального принципа правовой законности. – В статье на основе анализа системы фундаментального принципа правовой законности автор выдвигает структурные элементы правозаконности: цели, подцели, подфункции, принципы, требования, гарантии. Если целью правовой законности является реализация права в поведении участников общественных отношений, то целью правозаконности - позитивация объективных свойств и требований права, которая превращается в требование к правотворческим органам: принять только имеющие правовые свойства нормативные акты. Соответственно функцией правозаконности является создание условий для принятия законодательства, соответствующего объективным свойствам общественных отношений, идеям свободы, справедливости и гуманизма. Гарантии правозаконности включают в себя приемы и способы, обеспечивающие принятие имеющих правовой характер нормативных актов, и, в случае необходимости, приостановление их действий, объявление их недействующими или их упразднение. Принципом правозаконности является верховенство права, которое на стадиях правообразования и правотворчества превращается в требования, предъявляемые к содержанию и форме правотворчества.

Ключевые слова: *правовая законность, система, цель, принцип, гарантия, верховенство права*

SERGEY KOCHARYAN – Systemic Structure of Legality as a Fundamental Principle of Legal Legitimacy. – In the system of the universal principle of legal legitimacy, the components of the structure of legality are: the goal, sub-goals and sub-functions, the internal elements of each subsystem (principles, requirements), the implementation structure (or guarantees) of the latter. The goal of legal legitimacy is the implementation of law in the behavior of participants in public relations. The goal of legality is the positivization of the objective properties and requirements of the law, which turns into a demand presented to the self-creating bodies to posit only the objective properties of the law and adopt normative acts of a legal nature. Accordingly, the function of legality is to create conditions for the formation of legislation corresponding to the objective nature of social relations, the ideas of freedom, justice and humanism. Guarantees of the implementation of legality are a set of measures, tricks, which are designed to ensure the adoption of normative acts of a legal nature and, in necessary cases, their suspension, their invalidation and elimination after they come into force. The principle of legality is the supremacy of law, which in the stages of law formation and law-making turns into two groups of requirements for the content and procedure of law-making.

Key words: *legal legitimacy, system, goal, requirement, principle, guarantee, rule of law*

NAVIGATING THE LEGAL LANDSCAPE: AN ANALYSIS OF NFTs UNDER ARMENIAN LAW

TATEVIK DAVTYAN

"Nothing comes from nothing"- quoting the Greek philosopher Parmenides' famous thought in an article at WIPO Magazine, Andy Ramos aptly notices that in this digital age, new and unprecedented phenomena seem to come from "nothing" every two or three years¹. Those new developments can potentially revolutionize the world and transform society, with significant implications for the law and legal doctrines established in different jurisdictions worldwide. One such phenomenon is Non-Fungible Tokens ("NFTs") although were first introduced more than a decade ago, their popularity has grown exponentially in 2021² with sales figures increasing from \$94 million in 2020 to \$25 billion in 2021 and to 24,7 billion in 2022. Among others, celebrities, creators, and athletes alike have invested in NFTs and are exploring how the technology can be utilized to further commercialize their brand or work³. NFTs' use cases continue to increase and expand from digital art and games to fashion, music, academia, tokenization of real-world objects, patents, membership sales, loyalty programs, domain name ownership, decentralized finance (DeFi), and metaverse items. Despite NFTs growing popularity, most jurisdictions, e.g., the United States⁴ and the EU⁵, are still in the proc-

¹ See **Andy Ramos**, "The metaverse, NFTs and IP rights: to regulate or not to regulate?", WIPO Magazine, June 2022, [https://www.wipo.int/wipo_magazine/en/2022/02/article_0002.html].

² See, e.g., **D. Chalmers, C. Fisch, R. Matthews, W. Quinn, and J. Recker**, "Beyond the bubble: Will NFTs and digital proof of ownership empower creative industry entrepreneurs?" Journal of Business Venturing Insights 17 (2022), [https://doi.org/10.1016/j.jbvi.2022.e00309]; **K. Houser, and J. T. Holden**, "Navigating the Non-Fungible Token" (2022), [https://papers.ssrn.com/abstract=4055535]; **Q. Wang, R. Li, Q. Wang, and S. Chen**, "Non-Fungible Token (NFT): Overview, Evaluation, Opportunities and Challenges," (2021), [http://arxiv.org/abs/2105.07447].

³ For various applications of NFTs and how they are reshaping the future of digital assets see, e.g., **Rehman, W.; e Zainab, H.; Imran, J.; Bawany, N.Z.** *NFTs: Applications and challenges*. In Proceedings of the 2021 22nd International Arab Conference on Information Technology (ACIT), Muscat, Oman, 2021; **Shilina, Sasha**. "A comprehensive study on Non-Fungible Tokens (NFTs): Use cases, ecosystem, benefits & challenges." (2022), 10.13140/RG.2.2.15324.67206; **White Paper. Report from INTA Non-Fungible Tokens (NFTs)**, April 2023.

⁴ The legal status of NFTs under U.S. law is still up for determination, however, the U.S. government is taking steps to address cryptocurrency-related crime. The National Cryptocurrency Enforcement Team was established to tackle the misuse of cryptocurrency and digital assets. Due to the Infrastructure Investment and Jobs Act (IIJA) of 2021, the U.S. Internal Revenue and Treasury Department were granted the power to establish tax reporting rules for cryptocurrency transactions. The IIJA also includes NFTs in its definition of digital assets and subjects them to cost basis reporting regulations, but there are still areas that require clarification, such as the impact of different organizational structures of NFT marketplaces on information reporting rules. The Treasury Department would also begin directing existing anti-money-laundering controls toward virtual currency.

⁵ The Markets in Crypto-Assets Regulation (MiCA) is expected to enter into force in 2024. It aims to provide a consistent international approach to assets that are a digital representation of value or rights which may be transferred and stored electronically using a distributed ledger or similar technology. Under the current draft of the MiCA, NFT issuers will fall out of the scope of the licensing obligation and will most likely be exempt from the requirement to draft, notify and publish a crypto asset white paper in an Initial Coin Offering, as this will not apply to NFTs. However, they will still need to comply with standard business conduct and governance requirements and be legal entity established within or outside the EU.

ess of developing regulatory frameworks for NFTs.

Key words: *Non-Fungible Tokens, NFTs, Digital assets, Blockchain, Smart contracts, Tokenization, Ownership, Intellectual Property*

Introduction

There are no specific laws or regulations governing the use, ownership, and circulation of NFTs in Armenia. There have been attempts to regulate some aspects of digital assets. In 2018, a draft law titled "Law on Development of Digital Technologies"⁶ was developed to regulate relations related to cryptocurrency mining in Armenia. The draft has not entered into law. In 2019, another draft law titled "Law on Digital Financial Assets"⁷ was developed to regulate the mining, circulation, and storage of crypto assets. The draft law provided definitions for mining, cryptocurrency, and blockchain. Additionally, any digital financial asset or cryptocurrency created as a result of mining was defined as "property." The draft outlined the scope of persons who are authorized to engage in transactions of digital financial assets and the conditions under which persons may be required to bear tax obligations. It also proposed conditions for identifying relevant persons under the "Law on Combating Money Laundering and Terrorist Financing". The draft law has not entered into law.

Currently, Armenia does not have a developed NFT market, nor are there any major companies operating in the NFT space. However, given the global impact of NFTs on various industries and individuals, this article seeks to contribute to the ongoing global conversation about this technology. The free nature of NFT marketplaces increases the risk of bad actors using NFTs for illegal purposes such as money laundering or financing terrorism. Effective regulation of NFTs is therefore necessary for Armenia and other jurisdictions. Finally, Armenia has a rich cultural heritage, including ancient art and artifacts that have been preserved for centuries. The use of NFTs could provide new opportunities for preserving and sharing this cultural heritage in digital form. The legal regulation of NFT issuance and circulation is a complex issue that involves various branches of law, including financial and **banking** law, investment and information law, and civil law. The aim of this article is not to delve into the intricacies of all these laws but to demonstrate the feasibility of utilizing NFTs in Armenia despite the lack of specific legal regulations based on the existing legal frameworks, particularly in the realm of private law. This includes laws governing the sale of goods and transfer of property, contract law, and intellectual property law. As Professor Danielle D'Onfro has observed in her work on bailments and cloud storage: "The law of technology without background principles of private law is the law of suckers"⁸.

In this article, we provide an analysis of the concept of tokenization as it relates to NFTs and its implications for ownership and property rights (I). We

⁶ See Draft law on "Development of Digital Technologies", Պ-253-05.02.2018-ՖԿ-011/0, [http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9504&Reading=0&fbclid=IwAR07Ok_a0yB1ENjT41jf2tZfXSKCs5BcrHUq2OwHTtarK3sPvTPA9sbQQ].

⁷ See Draft law on "Digital Financial Assets", Պ-224-12.07.2019-ՖԿ-011/0, [<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10671&Reading=0>].

⁸ See Danielle D'Onfro, *The New Bailments*, 97 Wash. L. Rev. 97 (2022) [<https://digitalcommons.law.uw.edu/wlr/vol97/iss1/6>].

further examine the legal nature of NFTs to ascertain their position among the objects of civil rights under the Civil Code of Armenia (II). We also explore intellectual property law to determine if owning an NFT representing an object of the intellectual property confers any intellectual property rights to the NFT owner. Additionally, we discuss the transfer of IP rights concerning NFTs and how smart contracts can be utilized (III) and we provide a conclusion (IV).

I. Concept of Tokenization, Ownership and Property Rights

To understand NFTs, it's important to first grasp the legal concept of tokenization and tokens⁹ as well as the distinction between fungible and non-fungible assets. Fungible assets are interchangeable and can be replaced by another identical item, like a 1 Euro coin that cannot be distinguished from any other coin. Commodities like silver, gold, oil, grain, and money are usually fungible and can be easily divided into smaller fractions. Non-fungible assets, on the other hand, are unique and cannot be replaced by any other item, such as a custom-made silver necklace, a golden statuette, or a painting. They are indivisible and cannot be divided into fractions in the physical world. As an example, the Mona Lisa painting has many copies, but only one original and authentic version. The original has unique properties that make it one-of-a-kind. Similarly, fiat money has an exchangeable value, where one can exchange a Euro for a Dollar, but a banknote with a unique sequence of digits or a palindrome serial number becomes rare and valuable. "Nonfungible" in NFT means that each token is not exchangeable with another token, making each token a unique entity that represents a single specific object¹⁰. Different token standards - the "ERC20" for fungible and "ERC-721" for non-fungible assets - are used for tokenization in the Ethereum infrastructure.

In the legal context, the tokenization of real-world assets is not a new concept and has a long history. Various documents such as negotiable instruments, bills of lading, deeds of title, and security certificates have functioned as tokens that represent specific assets and the rights and interests associated with them. Historically, the emergence of tokenization has brought about increased safety, security, and convenience in transferring asset ownership. In each instance above, the token serves as proof of ownership for the underlying asset, and the transfer of the token results in the transfer of ownership, along with all its accompanying rights and obligations. Hence, the idea behind tokenization in the legal context is that a single thing can be configured to actually represent rights, such as property rights, in something else. As a result, historically the law has evolved to respond to these new asset forms, providing a conceptual framework for determining the parties' rights and obligations while also incorporating long-established customs of the trade. Therefore,

⁹ See **Moringiello, Juliet M.** and **Odinot, Christopher K.**, *The Property Law of Tokens* (November 1, 2021), 74 Florida Law Review 607 (2022), U Iowa Legal Studies Research Paper No. 2021-44, Widener Law Commonwealth Research Paper, SSRN: [<https://ssrn.com/abstract=3928901>]; **Heines, R., C. Dick, C. Pohle** and **R. Jung** (2021): *"The Tokenization of Everything: Towards a Framework for Understanding the Potentials of Tokenized Assets"* (2021), PACIS 2021 Proceedings, 40. [<https://aisel.aisnet.org/pacis2021/40>].

¹⁰ See **B. Baker, A. Pizzo,** and **Y. Su**, "Non-Fungible Tokens: A Research Primer and Implications for Sport Management," *Sports Innovation Journal* 3, 1–15 (2022), [https://www.researchgate.net/publication/357900561_NFTs_Applications_and_Challenges].

tokenization has been successful because was supported by a well-established legal framework. For example, the bill of lading represents the title to the goods because it is recognized by the law¹¹.

With the advent of blockchain technology, the “contemporary” tokenization of assets has gained widespread recognition as one of the most significant applications of this technology. Tokenization has been defined as the process of transforming a physical or virtual asset into a digital representation (a token) that can be traded¹². The enthusiasts proclaim that NFTs are the future of digital property, and tokenization of assets has the potential to disrupt how digital (and in the future, the real world) assets are acquired, owned, and transferred¹³. Tokenization represents a form of digitalization of value and, just like the Internet-enabled free and fast circulation of digitized information, the blockchain is allowing the “almost free” and borderless flow of digitized value¹⁴. Tokens are defined as programmable digital units of value that get registered on a digital ledger¹⁵. Tokens are a type of computer code that serves as a digital representation (of something) on the blockchain¹⁶. Different types of tokens can represent a broad range of assets, from commodities and loyalty points to shares, coins, and other things.

NFTs can take on various forms, but the most common type is defined as a metadata file that contains encoded information about the digital version of the work being tokenized. The less common form involves uploading the entire work onto the blockchain, which can be costly. The most widely used NFT type is a piece of code that's recorded on the blockchain. This code comprises various pieces of information – mandatory or optional - as specified in the ERC-721 standard for NFTs. The token ID is the first essential element of an NFT, which is a unique number that's generated when the token is created. The second element is the contract address, a blockchain address that's accessible worldwide using a blockchain scanner. The combination of these two elements makes the token one-of-a-kind, and there's only one token globally with that specific token ID and contract address. Essentially, an NFT consists of these two numbers. However, the contract may also include other crucial elements, such as the creator's wallet address, which helps identify the NFT's originator. Most NFTs also include a link to the original work's location since the NFT isn't the work itself, but a distinct digital signature that's connected in some way to the original work. Thus, almost anything can be tokenized with NFT, since it is only a record in a distributed register. The foregoing is illustrated in the image below.

¹¹ See **Moringiello, Juliet M.** and **Odinot, Christopher K.**, supra note 9, at 624.

¹² See, e.g., **B. Baker, A. Pizzo,** and **Y. Su**, supra note 11, at 3.

¹³ See **Moringiello, Juliet M.** and **Odinot, Christopher K.**, supra note 9, at 612.

¹⁴ See **Ahmad, Xiaodi,** and **Jayaraman**, “*Understanding Non-Fungible Tokens (NFTs): Overview, Opportunities, and Challenges*”, The 49th Annual Northeast Business & Economics Association Conference, New Hampshire, 2022; at 1.

¹⁵ See **Andres Guadamuz**, “*Non-fungible tokens (NFTs) and copyright*” WIPO Magazine, December 2021, [https://www.wipo.int/wipo_magazine/en/2021/04/article_0007.html].

¹⁶ See **Ahmad, Xiaodi,** and **Jayaraman**, *Id.* at 1.

NFT Metadata

| Item Metadata | |
|---|---|
| Contract Address | Token Metadata |
| 0x8c5aCF6dBD24c66e6FD44d4A4C3d7a2D955AA ad2 | { |
| Token ID | "symbol": "Mintable Gasless store", "image": |
| 86193240282618763854367501 | "https://d1czm3wxz9zd.cloudfront.net/ 613b908d0000000000000000/8619324028261876385436750160835360531676033165 |
| 608353605316760331651808345700 | "animation_url": "", |
| 084608326762837402898 | "royalty_amount": true, |
| Token Name | "address": |
| The Clearest Light is the Most Blinding | "0x8c5aCF6dBD24c66e6FD44d4A4C37a2D955AAad2", |
| Original Image | "tokened" |
| https://d1czm3wxz9zd.cloudfront.net/613b908d-19ad-41b1-8bfa0e0016820739c/0000000000000000/86193240282618763854367501608353605316760331651808345700084608326762837402898/ITEM_PREVIEW1.jpg | "86193240282618763854367501608353605316760331" "resellable": true, "original_creator": |
| Original Creator | "0xBe8Fa52a0A28AFE9507186A817813eDC1 |
| 0xBe8Fa52a0A28AFE9507186A817813eD C1454E004 | "edition_number": 1, |
| | "description": " |
| | A beautiful bovine in the summer sun "auctionLength": |
| | 43200, "title": "The Clearest Light is the Most Blinding", |
| | "url": |
| | "https://metadata.mintable.app/mintable_gasless/86193240 |
| | "file_key": "", |
| | "apiURL": "mintable_gasless/", |
| | "name": "The Clearest Light is the Most Blinding", |
| | "auctionType": "Auction", |
| | "category": "Art", |
| | "edition_total": 1, "gasless": true |
| | } |

Image: Moringiello, Juliet M. and Odinet, Christopher K., *The Property Law of Tokens* (November 1, 2021). U Iowa Legal Studies Research Paper No. 2021-44. Used with permission.

Thus, the written form requirement is satisfied because the NFT acquisition transaction is conducted on the blockchain using electronic or other technical means, which meets the criteria outlined in paragraph 3 of Article 450 of the Civil Code. The signature requirement is fulfilled when the NFT purchaser

transfers payment in digital currency to the alienator's electronic wallet, which enables reliable identification of the person expressing their intention to purchase the NFT and conclude a license agreement. Therefore, the written form of the license agreement is satisfied at the moment when the NFT purchaser's identity is reliably established, which occurs when they transfer payment to the alienator's electronic wallet.

IV. CONCLUSION

The concept of tokenization in the legal context refers to using a single item to represent rights in something else. In traditional contexts, a token served as proof of ownership for the underlying asset, and the transfer of the token resulted in the transfer of ownership, along with all its accompanying rights and obligations. However, NFTs currently lack a strong linkage to the underlying asset, and there is no established legal framework to establish one. NFTs do not embody property rights in a reference thing. Instead, they serve as a proof of authenticity for a digital asset recorded on a blockchain in a sequential manner. When someone purchases an NFT, they do not acquire the work or the medium it is stored in, but instead become the owner of the token representing the work. Therefore, NFTs are "new assets" and raise many legal questions.

The legal status of NFTs in Armenia is currently uncertain since there is no specific legislation or case law governing them. NFTs without utilitarian properties may be classified as "other property," and the principles of movable property rights and contract law may apply. However, if an NFT grants additional rights to its owner, i.e., NFTs with utilitarian properties, it may be considered as "individually defined digital rights" yet to be defined by the law. Owning an NFT that represents an underlying IP asset does not necessarily grant the new owner IP rights unless IP rights are assigned or transferred to the NFT purchaser through smart contracts or traditional legal instruments. Based on the contract law principles and various legal provisions, it is concluded that smart contracts are likely to be considered validly formed contracts in Armenia.

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆ – Կողմնորոշվելով իրավական դաշտում. NFT-ի (անփոխարինելի նշանների) վերլուծությունը ըստ ՀՀ օրենսդրության – Հոդվածում քննարկվում են անփոխարինելի նշանների (NFT) իրավական բնույթն ու առանձնահատկությունները: ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում NFT-ների հետ կապված հարաբերությունները: Հոդվածագիրը ներկայացնում է NFT-ների իրավական կարգավիճակը և դրանց հնարավոր տեղը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված՝ քաղաքացիական իրավունքների օբյեկտների շարքում: Քննարկվում են նշանավորման գործընթացը (tokenization) և դրա հարաբերակցությունը սեփականության իրավունքի հետ: Վերլուծվում են մտավոր սեփականության իրավունքի նորմերը, եզրահանգվում է, որ մտավոր սեփականության օբյեկտը ներկայացնող NFT-ների գնորդը ինքնըստիներքյան ձեռք չի բերում մտավոր սեփականության իրավունքներ օբյեկտի նկատմամբ. այդ իրավունքները կարող են փոխանցվել NFT-ների գնորդին խելացի պայմանագրերի կամ ավանդական իրավական գործիքների միջոցով: Ներկայացվում է խելացի պայմանագրերի կիրարկման հնարավոր-

ըութունը Հայաստանում՝ խելացի պայմանագրերի վերաբերյալ հատուկ կարգավորումների բացակայության պարագայում:

Բանալի բառեր – *չփոխարկվող նշաններ, թվային ակտիվներ, բլոկչեյն, խելացի պայմանագրեր, թոքենիզացիա, սեփականության իրավունք, մտավոր սեփականություն*

ТАТЕВИК ДАВТЯН – Ориентирясь в правовом поле: анализ NFT (невозмозаменяемых токенов) в соответствии с законодательством Армении. – В данной статье рассматриваются правовая природа и особенности невозмозаменяемых токенов (NFTs). Законодательство Республики Армения не регулирует отношения **между** незаменимыми знаками. В данной статье представлен правовой статус NFTs и их возможное место среди объектов гражданских прав, определенных статьей 132 Гражданского кодекса РА. Анализируется процесс токенизации и его связь с правом собственности. Проанализированы нормы законодательства об интеллектуальной собственности, сделан вывод о том, что покупатель NFTs, представляющих объект интеллектуальной собственности, автоматически не приобретает права интеллектуальной собственности на объект: эти права могут быть переданы покупателю NFTs через смарт-контракты или традиционные правовые инструменты. Анализируется возможность реализации смарт-контрактов в Армении при отсутствии специального регулирования смарт-контрактов.

Ключевые слова: *невозмозаменяемые токены, цифровые активы, блокчейн, смарт-контракты, токенизация, право собственности, интеллектуальная собственность*

**ԼՐԱԳՐՈՂԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոդվածը նվիրված է լրագրողական աղբյուրների պաշտպանությանը: Հոդվածում վերլուծվում են լրագրողական աղբյուրների պաշտպանության միջազգային հիմնական գործիքները և փաստաթղթերը: Ավելին, հոդվածը դիտարկում է լրագրողական աղբյուրների պաշտպանությունը մի քանի հարթությունից, դրանք են՝ լրագրողական չհրապարակված նյութերի տրամադրում, վկայություն դատարանում, մամուլի կազմակերպությունների և լրագրողների տների խուզարկություն: Հոդվածում մեծ շեշտադրում է կատարվում լրագրողական աղբյուրների պաշտպանության միջազգային լավագույն փորձին. այսպես՝ հոդվածում վերլուծվում են լրագրողների աղբյուրների պաշտպանության վերաբերյալ Հարավսլավիայի միջազգային տրբունալի չափանիշները, Կանադայում կիրառվող հայտնի Վիգմորի թեսթը, ինչպես նաև Սլովենիայի, Իտալիայի, Շվեդիայի և այլ երկրների փորձը լրագրողների աղբյուրների պաշտպանության համար: Հոդվածում հատկապես կարևորվում են նաև լրագրողների աղբյուրների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը: Անդրադառնալով հայկական իրավական համակարգին՝ հոդվածը մանրամասն անդրադարձ է կատարում նաև լրագրողական աղբյուրների պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիրքորոշումներին: Հիմնվելով միջազգային լավագույն փորձի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ ՄԴ որոշումներում ամրագրված դիրքորոշումների վրա՝ հոդվածը սահմանում է մի շարք չափանիշներ լրագրողական աղբյուրների պաշտպանության համար հայկական իրավական համակարգում՝ հաշվի առնելով լրագրողների հատուկ դերը ժողովրդավարական հասարակությունում:

Բանալի բառեր – *խոսքի ազատություն, լրագրողական աղբյուր, ՄԻԵԴ, լրագրող*

Լրագրողական աղբյուրների պաշտպանությունը խոսքի ազատության իրավունքի առանցքային տարրն է: Անհերքելի է, որ մամուլը մեծապես կախված է անձանցից, ովքեր հանրային հետաքրքրություն ունեցող հարցերով մատակարարում են տեղեկատվություն: Շատ հաճախ անհատները լրագրողներին հայտնում են գաղտնի տեղեկատվություն՝ այն համոզմունքով, որ աղբյուրի գաղտնիության պահպանմամբ այդ տեղեկատվությունը հասանելի կդառնա հասարակության լայն շրջանակների: Ավելին՝ հաճախ հենց անանունությունը և գաղտ-

նիությունն են այն հիմնական նախապայմանները, որոնց հիման վրա լրագրողները ստանում են իրենց տեղեկատվությունը: Երբ կամ եթե աղբյուրները համոզված չեն, որ գաղտնիությունը կպահպանվի, նրանք լռում են, և հասարակությունը իր հերթին զրկվում է կենսական տեղեկատվությունից¹:

Լրագրողական աղբյուրների պաշտպանությունը զուտ իրավական հարց չէ: Այն նախնառաջ էթիկական կարևոր հիմնահարց է, նույնիսկ նշվում է, որ բոլոր լրագրողների միջև առկա է համաձայնություն, որ աղբյուրների պաշտպանությունը գրեթե համընդհանուր մակարդակի հասցված մասնագիտական կանոն է²:

Լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը նախատեսված է 100-ից ավելի երկրների օրենսդրությամբ³, ընդհուպ մինչև սահմանադրական ամրագրմամբ: Այսպես, օրինակ, Արգենտինայի Մահմանադրությունը ուղղակիորեն ամրագրում է, որ լրագրողական տեղեկատվության աղբյուրների գաղտնի բնույթը չպետք է խախտվի:

Բավականին հետաքրքիր է նաև շվեդական կարգավորումը, մասնավորապես՝ տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը սահմանադրական իրավունք է, որը ամրագրված է շվեդական սահմանադրության մաս կազմող մամուլի ազատության մասին ակտով: Ավելին՝ սահմանադրական կարգավորումից զատ՝ լրագրողների համար նախատեսված է քրեական պատասխանատվություն՝ առանց համապատասխան թույլտվության և ընթացակարգի իրենց տեղեկատվության աղբյուրները բացահայտելու համար⁴:

Լրագրողական աղբյուրների պաշտպանությանը անդրադարձել են ոչ միայն ներպետական օրենսդրությունները, այլ նաև միջազգային տարբեր կառույցներ:

Այս առումով կարևոր են նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տիբունալի ամրագրած մոտեցումները;

1993 թվականին «The Washington Post-ի» («Վաշինգտոն Փոստ») լրագրող Ջոնաթան Ռանդալը հրապարակեց հարցազրույց, որը մասամբ հիմնված էր Ռադուլավ Բրջանինի՝ բոսնիացի սերբի հարցազրույցի վրա, որում վերջինս պնդում էր, որ ոչ սերբերը պետք է խաղաղ դուրս մղվեն՝ էթնիկապես մաքուր միջավայր հաստատելու համար: Այս հարցազրույցի հրապարակումը բարձրացրեց լրագրողի՝ վկայություն տալու հարցը Միջազգային քրեական տրիբունալի առջև: Ռանդալը հրաժարվեց ցուցմունք տալուց և հարցը բարձրացրեց Միջազգային քրեական տրիբունալի բողոքարկման պալատի առջև, որն էլ այս հարցի կապակցությամբ կատարել է մի քանի կարևոր շեշտադրում:

Այսպես, բողոքարկման պալատը այն համոզմունքին էր, որ պատե-

¹ Տե՛ս <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

² Տե՛ս Moore, Roy L., and Michael D. Murray. *Media Law and Ethics*. Routledge, 2012, էջ 115:

³ Տե՛ս <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

⁴ Տե՛ս Moore, Roy L., and Michael D. Murray. նշվ. աշխ., էջ 116:

րազմական թղթակիցներին վկայություն տալուն հարկադրելը կարող է վնասակար լինել նրանց լուրերի հավաքման գործառնության և անձնական անվտանգության համար: Բացի այդ՝ տեղեկացված լինելու հանրային շահի և դատավարությունը համապատասխան ապացույցով ապահովելու շահի առումով դատարանը սահմանել է հետևյալ չափանիշները՝

-առաջին հերթին պետք է ցույց տալ, որ ապացույցը ստացվել է ուղղակի ճանապարհով, և այն էական է,

-կարևոր արժեք ունի գործի էությունը հասկանալու համար,

-չկա այլ ճանապարհով ապացույց ստանալու հնարավորություն⁵:

Լրագրողի տեղեկատվության աղբյուրի պաշտպանությանը անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր բազմաթիվ որոշումներում (*Financial Times LTD and others, v. The United Kingdom, Goodwin v. The United Kingdom, Roemen and Schmit v. Luxembourg, Nordisk Film & TV A/S v. Denmark, Voskuil v. the Netherlands, Sanoma Uitgevers B.V. v. the Netherlands, Telegraaf Media Nederland Landelijke Media B.V. and Others v. the Netherlands, Becker v. Norway*): Պետք է նշել, որ հասկապես շատ է մեջբերվում Գուդվինն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործը:

Այն վերաբերում էր անգլահայտակ, «Էնջինիեր» ամսագրի հաստիքային ցուցակում որպես լրագրող-ստաժոր աշխատող Գուդվինին, ով փորձում էր հրապարակել տեղեկատվություն այն մասին, որ «Տետրա» ընկերությունը զբաղված է 5 միլիոն ֆունտի փոխառության հայթայթմամբ, քանի որ ֆինանսապես ծանր վիճակում է: Այս մասին Գուդվինը իմացել էր տեղեկատվության իր աղբյուրից: Իմանալով Գուդվինի մտադրության մասին՝ «Տետրա»-ն ազգային դատարանների միջոցով փորձել էր հարկադրել Գուդվինին բացահայտել իր տեղեկությունների աղբյուրը, ուստի Գուդվինը ստիպված էր դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այս գործով Եվրոպական դատարանը սահմանել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը ներառում է նաև տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ լրագրողների իրավունքը. «Տեղեկատվության լրագրողական աղբյուրների պաշտպանությունը մամուլի ազատության հիմնարար պայմաններից է...»: Դատարանը շարունակում է այս միտքը՝ նշելով. «Նման պաշտպանության բացակայության պարագայում տեղեկատվության աղբյուրները կդադարեն մամուլին աջակցելուց, ինչն էլ բացասաբար կանդրադառնա հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ ստույգ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու մամուլի հնարավորության վրա: Արդյունքում կխաթարվի մամուլի՝ որպես հասարակական շահերի պաշտպանի կենսականորեն կարևոր դերը: Նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության աղբյուրների պաշտպանության կարևորությունը մամուլի

⁵ *St' u Moore, Roy L., and Michael D. Murray*, նշվ. աշխ., էջ 115:

ազատության համար և այն վտանգավոր ներգործությունը, որով աղբյուրի բացահայտման մասին դատական կարգադրությունը կարող է ունենալ մամուլի ազատության վրա՝ նման միջոցը չի կարող համարվել համատեղելի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ, եթե դա արդարացված չէ ավելի կարևոր հասարակական շահի առկայության անհրաժեշտությամբ»⁶:

Լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանությանը անդրադարձել են նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը և Եվրոպայի խորհրդի նախարարական կոմիտեն:

Այսպես՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Լրագրողների տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու վերաբերյալ» 2000 թվականին ընդունված թիվ R(2000)7 հանձնարարականը սահմանում է մի շարք չափանիշներ, որոնց դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է համարվել իրավաչափ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի բացատրական հուշագրում հստակեցված են նաև այն չափանիշները, որոնք պահպանելիս կարող են կիրառվել տեղեկատվության աղբյուրի պաշտպանության սահմանափակումներ, մասնավորապես՝

- ա) այլընտրանքային միջոցների սպառում,
- բ) իրավաչափ նպատակի գերակայում:

Ընդ որում՝ «գերակայող իրավաչափ նպատակը» ենթադրում է.

- անձի կյանքի պաշտպանության անհրաժեշտություն,
- ծանր հանցագործության կանխման անհրաժեշտություն,
- ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանության անհրաժեշտություն:

Միաժամանակ, նման բացահայտումը պետք է լինի **բացառիկ դեպքերում**՝ պայմանավորված հասարակության քրեաիրավական բնույթի կենսական շահով⁷:

2011 թվականին հանձնարարականով հանդես եկավ նաև Խորհրդարանական վեհաժողովը: Այսպես՝ 1950(2011) հանձնարարականով վեհաժողովը մտահոգությամբ նշում է, որ Եվրոպայի շատ երկրներում իշխանությունները մի շարք դեպքերում հարկադրել են կամ փորձել են հարկադրել լրագրողներին բացահայտելու իրենց աղբյուրները՝ չնայած Նախարարների կոմիտեի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշների: Նշվում է, որ նման խախտումները առավել տարածված են Խորհրդի անդամ այն երկրներում, որոնցում չկա հստակ օրենսդրություն:

Վեհաժողովը ընդգծում է, որ իշխանությունները չեն կարող պահանջել տեղեկատվության աղբյուրի բացահայտում, եթե պահպանված

⁶ <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%22001-57974%22%7D>, նուև՝ <http://www.foi.am/hy/articles/item/352/>

⁷ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf>

չեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության չափանիշները, և հաստատված չէ, որ ողջամտորեն չկա տեղեկատվությունը ստանալու այլընտրանք, կամ դրանք սպառված են, տեղեկատվության բացահայտման իրավաչափ շահը գերազանցում է տեղեկատվության չբացահայտման հանրային շահը, և տեղեկատվության բացահայտման գերակա պահանջը հաստատված է:

Այդուհանդերձ, տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է իրականացվի բացառիկ դեպքերում, երբ առկա են կենսական հանրային կամ անհատական շահեր և դրանք հստակորեն սահմանված են: Տեղեկատվության աղբյուրը բացահայտել պահանջող իշխանությունները պետք է հիմնավորեն, թե ինչու է այդ կենսական շահը գերակայում տեղեկատվության չբացահայտման շահի նկատմամբ և արդյոք այլընտրանքային միջոցները սպառվել են, թե ոչ: Եթե ազգային օրենսդրությամբ այդ աղբյուրները պաշտպանված են ցանկացած տեսակի բացահայտումից, դրանք չպետք է բացահայտվեն⁸:

Վերոգրյալից ակներև է, որ լրագրողի՝ տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքը ամրագրված է միջազգային մակարդակով և բազմաթիվ երկրների օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրությամբ ևս պաշտպանվում է լրագրողի տեղեկատվության աղբյուրը: Այսպես, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է.

«1. Լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»:

Միայն նշված հոդվածը բավական չէ լրիվ հասկանալու լրագրողի աղբյուրի պաշտպանության ողջ ծավալը: Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ լրագրողի այս իրավունքը դրսևորվում է մի շարք հարթություններում:

1) Լրագրողական չհրապարակված նյութերի տրամադրում

Լրագրողական աղբյուրների պաշտպանությունը ենթադրում է, որ լրագրողները պաշտպանված են դեռևս չհրապարակված հետազոտա-

⁸ Տե՛ս <https://rm.coe.int/factsheet-on-protection-of-sources-june2018-docx/16808b3dd9>

կան և վերլուծական իրենց նյութերը իշխանություններին և իրավապահ մարմիններին տրամադրելու պարտականությունից: Եթե նշված նյութերը մինչև լրագրողի կողմից ամբողջացումը հասանելի դառնան իշխանություններին կամ այլոց, մեծ է հավանականությունը, որ համապատասխան ապացույցները կարող են վերափոխվել, վերանալ կամ այլ կերպ վնասվել: Այս պատճառով է, որ ՄԻԵԴ-ը «Նագլան ընդդեմ Լատվիայի» գործով հանգել է այն եզրակացության, որ լրագրողի՝ հետազոտական նյութը հարկադիր տրամադրելը կարող է զսպող ազդեցություն (chilling effect) ունենալ լրագրողի խոսքի ազատության վրա⁹:

2) Վկայություն դատարանում

Լրագրողական աղբյուրի պաշտպանության հաջորդ տարրը ենթադրում է լրագրողների պաշտպանություն, երբ իշխանությունները պահանջում են դատարանում վկայություն տալ: Մա պաշտպանում է լրագրողին իշխանության կամ այլ ուժային կառույցի նախաքննական գործիք դառնալուց: Հարկ է նշել, որ դեռևս 2007 թվականին ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով պատասխանատուն հրապարակել է անդամ երկրներում տեղեկատվության աղբյուրների պաշտպանության վերաբերյալ ուսումնասիրություն, որով կառույցը խորհուրդ է տվել, որ լրագրողները չպետք է վկայություն տան քրեական կամ քաղաքացիական դատավարությունների ժամանակ կամ որպես վկա տրամադրեն տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ նման անհրաժեշտությունը ունի կենսական նշանակություն, տեղեկատվությունը այլ միջոցներով հասանելի չէ, չկա հավանականություն, որ նման տեղեկատվության տրամադրումը կվտանգի առողջությունը և չի սահմանափակի այլոց ունակությունը հետագայում նմանատիպ աղբյուրից տեղեկություն ստանալու¹⁰:

Այս երաշխիքը հատկապես կարևորվում է զինված հակամարտությունների ժամանակ, ինչն էլ նախկին Հարավսլավիայի գործով ռազմական տրիբունալը նշել է: Մասնավորապես, տրիբունալը ընդգծել է՝ եթե պատերազմական թղթակիցները սկսեն դիտարկվել որպես մեղադրանքի հնարավոր վկաներ, ապա նրանք դիտողից արագորեն կվերածվեն պատերազմական հանցագործությունների թիրախի՝ վտանգելով իրենց կյանքը¹¹:

3) Մամուլի կազմակերպությունների գրասենյակների և լրագրողների տների խուզարկություն

Լրագրողների տեղեկատվության իրավունքի պաշտպանության համատեքստում կարևորվում է մամուլի կազմակերպությունների

⁹ Տե՛ս <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

¹⁰ Տե՛ս Organization for Security and Co-operation in Europe, Representative on Freedom of the Media, Access to information by the media in the OSCE region: trends and recommendations. Summary of preliminary results of the survey, 30 April 2007: Տե՛ս նաև <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

¹¹ Տե՛ս Prosecutor v Radoslav Brdjanin and Momir Talic, Case IT-99-36-AR73.9, Decision on Interlocutory Appeal, 11 Dec 2002: Տե՛ս նաև <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

գրասենյակների և լրագրողների տների խուզարկության հարցը: Այսպես, օրինակ, Կանադայի գերագույն դատարանը սահմանել է 9 շափանիշ, որոնք պետք է պահպանվեն թերթերի կամ մեդիա կազմակերպությունների գրասենյակները խուզարկելիս: Դրանք են՝ քրեական գործերի քննության, մեղադրանքի և լուրեր հավաքելու ու տարածելու մեդիա կազմակերպությունների շահերը հավասարակշռելը, այլընտրանքային աղբյուրներից տեղեկատվություն ստանալու հավանականությունը, նյութերի հրապարակված լինելը, խուզարկությունը սահմանափակելը և խուզարկությունից հետո վերլուծություն կատարելը, ինչպես նաև քննարկվում է, թե արդյոք գտնվել են անհրաժեշտ նյութերը և արդյոք խուզարկությունը իրականացվել է հիմնավորված, թե ոչ¹²:

Գերմանիայում 2007 թվականին Սահմանադրական դատարանը սահմանեց, որ լրագրողական սենյակների խուզարկությունը խախտել է խոսքի ազատության իրավունքը, որը երաշխավորվում է երկրի Հիմնական օրենքով¹³:

Այս առումով հատկապես կարևոր է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Եվրոպական դատարանը լրագրողների բնակարանների խուզարկության և նրանցից նյութերի առգրավմանը անդրադարձել է մի շարք որոշումներով (Roemen and Schmitt v. Luxembourg, Ernst and Others v. Belgium, Tillack v. Belgium, Martin and Others v. France, Ressiot and Others v. France, Saint-Paul Luxembourg S.A. v. Luxembourg, Stichting Ostade Blade v. the Netherlands, Görmüş and Others v. Turkey): Ուշադրության է արժանի «Գորմուսն ընդդեմ Թուրքիայի» գործը:

2007 թվականի ապրիլին «Նոկիտա» շաբաթաթերթը հրապարակել էր փաստաթղթեր, որոնք Թուրքիայի զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը դասակարգել էր գաղտնի: Դիմումատուն, ով ոչ միայն թերթի խմբագիրն էր, այլ նաև հետաքննող լրագրողը, պնդում էր, որ իշխանությունների ձեռնարկած միջոցառումները, մասնավորապես իր անձնական կացարանի խուզարկությունը և փաստաթղթերի առգրավումը իրականացվել էին իր տեղեկատվության աղբյուրը բացահայտելու նպատակով, ինչով խախտվել էր արտահայտվելու ազատության իր իրավունքը, հատկապես որպես լրագրող տեղեկատվություն ստանալու և փոխանցելու իրավունքը:

Նշված գործով դատարանը հաստատված համարեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում: Ըստ դատարանի՝ գաղտնի զինվորական փաստաթղթերի հիման վրա հրապարակված նյութը, անկախ նրանից՝ ցանկալի, թե անցանկանալի էր զինված ուժերի համար, ի վիճակի էր ներդրում ունենալ հանրային քննարկման համար: Ընդգծելով լրատվության աղբյուրների պաշտպանության կարևորությունը՝ դատարանը գտավ, որ լրագրողի արտահայտվելու

¹² Տե՛ս <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>

¹³ Տե՛ս նույն տեղը:

ազատությանը, հատկապես տեղեկատվություն փոխանցելու իրավունքին միջամտությունը համաչափ չի եղել իրավաչափ նպատակին, չկար սոցիալական անհրաժեշտություն և հետևաբար անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում, հետևաբար առգրավումը, թերթի համակարգչային տվյալների ամբողջ ծավալը ստանալը և պահպանելը իշխանությունների կողմից իրավաչափ չէին: Ավելին՝ դատարանը այն կարծիքին էր, որ իշխանության նմանօրինակ գործողությունները կհանգեցնեն այն բանին, որ անհատները կխուսափեն տեղեկատվություն տրամադրել հանրային նշանակության հարցերի վերաբերյալ, այդ թվում այնպիսի հարցերի, որոնք վերաբերում են զինված ուժերին¹⁴:

4) Լրագրողներին հետևելու արգելք

Շատ է քննարկվում նաև լրագրողներին հետևելու արգելքի հարցը: Դեռևս 2014 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն նշել է, որ լրագրողներին և այլ մեդիա դերակատարների հետևելը, այդ թվում՝ առցանց տիրույթում (tracking their online activities), կարող է վնասել խոսքի ազատությունը, եթե այն իրականացվում է առանց անհրաժեշտ երաշխիքների, և նույնիսկ կարող է վտանգել առնչվող անձանց կյանքը: Այն կարող է ի չիք դարձնել լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը¹⁵:

Չեռաքրքրական է, որ Իտալիայի գերագույն դատարանը դեռևս 2004 թվականին ամրագրել է, որ աղբյուրների պաշտպանությունը պետք է մեկնաբանվի լայն՝ ընդգրկելով նաև լրագրողի հեռախոսային զանգերի գաղտնիությունը:

Դատարանը մասնավորապես նշել է, որ պաշտպանությունը պետք է ընդլայնվի՝ ընդգրկելով այն ամբողջ տեղեկատվությունը, որը կարող է հանգեցնել գաղտնի տեղեկություն տրամադրած անձանց նույնականացմանը: Այդ իսկ պատճառով, լրագրողի կողմից կատարված զանգերի հեռախոսահամարները ևս ենթակա են պաշտպանության, այն պատճառով, որ դրանք կարող են հանգեցնել տեղեկություն տրամադրած անձանց անհատականացմանը¹⁶:

Նույն մոտեցումն է ամրագրվել Սլովենիայում, որի Գերագույն դատարանը դեռևս 2007 թվականին նշել է, որ լրագրողական աղբյուրների պաշտպանությունը ազատ լրագրության և մամուլի հիմնաքարերից է: Այս որոշմամբ դատարանը արձանագրել է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրագրողի մուտքային և ելքային զան-

¹⁴ Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-160255%22%5D%7D>

¹⁵ Տե՛ս Declaration of the Committee of Ministers on the protection of journalism and safety of journalists and other media actors, Adopted by the Committee of Ministers on 30 April 2014 at the 1198th meeting of the Ministers' Deputies:

¹⁶ Տե՛ս Moretti Paolo v. Sentence of Court of Como of 22 November 2002, No. 2054; Decision of the Supreme High Court (“Corte Suprema di Cassazione”) – Sixth Criminal Chamber, 21 January 2004, No. 85., Տե՛ս նաև

<https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>:

գերի վերձանման միջոցով անկասկած արգելակել է լրագրողի կողմից հետագա հետաքննությունը: Հավանականությունը, որ տեղեկատվության աղբյուրը կարող է բացահայտվել, կհանգեցնի այն բանին, որ ոչ ոք չի ցանկանա լրագրողին հեռախոսով տրամադրել տեղեկություններ: Մա վտանգում է լրագրողի մասնագիտական գործունեության անաչառությունը և արդյունավետությունը հատկապես քաղաքական գործերի հետաքննությամբ զբաղվող լրագրողների դեպքում¹⁷:

Հարկ է նշել, որ ներկայումս ամբողջ աշխարհում շատ է քննարկվում նաև սահմանային անցակետերում լրագրողների խուզարկության հարցը, սակայն այս առումով կայուն դատական պրակտիկա դեռևս ձևավորված չէ¹⁸:

Ընդամին, շատ կարևոր է քննարկել նաև այն չափանիշները, որոնց դեպքում լրագրողին կարելի է հարկադրել բացահայտելու տեղեկատվության աղբյուրը: Այսպես, օրինակ, Կանադայում կիրառվում է *Վիզմորի* հայտնի թեսթը: Կանադայի նախադեպային պրակտիկան այնպիսին է, որ գաղտնիության իրավունքի մասին կարելի է խոսել, եթե կան թեսթի հետևյալ տարրերը.

Առաջին՝ հաղորդակցությունը պետք է հաստատվի գաղտնիության պայմաններում, այն ընկալմամբ, որ տեղեկատվություն հաղորդողի ինքնությունը գաղտնի պահվի:

Երկրորդ՝ գաղտնիությունը պետք է լինի կենսական հաղորդակցության հարաբերություններում:

Երրորդ՝ այդ հարաբերությունները պետք է լինեն այնպիսին, որ բարեխղճորեն ծառայեն հասարակական բարօրությանը: Ի վերջո, եթե բոլոր այս չափանիշները պահպանված են, դատարանը պետք է դիտարկի՝ արդյոք տվյալ պարագայում տեղեկատվությունն տրամադրողի ինքնությունը պաշտպանելու շահը գերակշռո՞ւմ է ճշմարտությունը իմանալու հասարակական շահին, թե՞ ոչ¹⁹:

Կարևոր է նաև ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հանգում է նրան, որ իրավունքին միջամտությունը պետք է նախատեսված լինի օրենքով, այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ: Մասնավորապես՝ միջամտության նպատակը պետք է լինի այլոց իրավունքները պաշտպանելը, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը և հանցագործությունները կանխելը, և որ տվյալ միջամտությունն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ հետևյալ սկզբունքների հաշվառմամբ.

- ազատ արտահայտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակության համար:

¹⁷ Sté u Ranc v. Ministry of Internal Affairs, Sklep in sodba II Ips 473/2005 in II Ips 474/2005, 10.10.2007: Sté u նաև <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>.

¹⁸ Sté u <https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/Protection/Article19.pdf>:

¹⁹ Sté u Moore, Roy L., and Michael D. Murray. նշվ. աշխ.:

րակության հիմնաքարերից է, և այս իմաստով լրատվամիջոցների համար նախատեսված երաշխիքներն առանձնակի կարևորություն ունեն,

- լրատվական աղբյուրի պաշտպանությունը լրատվական ազատության հիմնական պայմաններից է,

- առանց նման պաշտպանության աղբյուրները կխուսափեն աջակցել լրատվամիջոցներին հասարակությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տալու հարցում: Դրա հետևանքով կթուլանա լրատվամիջոցների կենսական դերը և բացասական ազդեցության կենթարկվի լրատվամիջոցների ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն տալու ունակությունը,

- հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում ազատ մամուլի լրագրողական աղբյուրների պաշտպանության կարևորությունը և աղբյուրի բացահայտման պահանջի բացասական ազդեցությունն այդ ազատության վրա նման միջոցը չի կարող համապատասխանել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջներին, քանի դեռ այն չի հիմնավորվել հանրային շահի գերակա պահանջով:

Որպես ընդհանուր սկզբունք՝ ազատ արտահայտվելու իրավունքի ցանկացած սահմանափակման «անհրաժեշտություն» պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Առաջին հերթին ազգային իշխանություններն են գնահատում սահմանափակումների համար «ծանրակշիռ սոցիալական պահանջի» առկայությունը, և նման գնահատական տալիս նրանք օժտված են որոշակի հայեցողությամբ:

Մյուս կողմից՝ հաշվի է առնվում, որ ազգային հայեցողության շրջանակները սահմանափակված են ժողովրդավարական հասարակության՝ ազատ մամուլը երաշխավորելու և պահպանելու շահով: Այդ շահը մեծ դեր է կատարում հավասարակշռման գործում, որով որոշվում է, թե արդյոք սահմանափակումները համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին: Բացահայտման պահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն աղբյուրի վրա, որի ինքնությունը կարող է պարզվել, այլ նաև լրատվամիջոցի վրա, որի հեղինակությունը կարող է խաթարվել ապագա հնարավոր աղբյուրների և հասարակության անդամների շրջանում, որոնք շահագրգռված են ստանալ տեղեկատվություն անանուն աղբյուրից, և որոնք իրենց հերթին կարող են դառնալ աղբյուր²⁰:

Հայաստանյան իրավական պրակտիկայում լրագրողների տեղեկատվության աղբյուրների բացահայտման առումով հատկապես կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ 1234 որոշումը «Հրապարակ օրաթերթ» ՄՊԸ-ի և «Ստարտ մեդիա» ՄՊԸ-ի դիմումների հիման վրա՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին

²⁰ St' u <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf>

կետի, 279-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

Գործի դատավարական պատմությունը հետևյալն էր. դիմողները ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերի քննիչից ստացել են գրություն առ այն, որ 26.06.2014 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԿԴ/0032/08/14 գործով որոշում է կայացրել «Հրապարակ» օրաթերթին և «Ի լուր էլ էմ» ինտերնետային կայքին համապատասխանաբար՝ «Հրապարակ» օրաթերթում 09.05.2014 թվականին տպագրված՝ «Ծուխ առանց կրակի, կամ ոստիկանապետի գլխին ամպեր են կուտակվում» և «Ի լուր էլ էմ» ինտերնետային կայքում 12.05.2014 թվականին տեղադրված՝ «Շիրակի ոստիկանապետը հարձակվել է հայտնի ըմբիշի վրա. Մարզիկը մտածում է Հայաստանի դրոշի տակ հանդես չգալու մասին» հոդվածները հրապարակելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության աղբյուրը բացահայտելուն պարտավորեցնելու մասին: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԿԴ/0032/08/14 գործով 26.06.2014 թվականին կայացրած որոշման դեմ դիմողների ներկայացուցիչները բերել են վերաքննիչ բողոք, որը մերժվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22.09.2014 թ. որոշմամբ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 22.09.2014 թ. որոշման դեմ դիմողների ներկայացուցիչները բերել են վճռաբեկ բողոք, ինչի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 23.12.2014 թվականին կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում²¹:

Նշված գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը նախ ամրագրեց այն չափանիշները, որոնց պահպանման դեպքում միայն կարելի է բացահայտել տեղեկատվության աղբյուրը: Այսպես, Բարձր դատարանը նշեց. ««Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի վեճի առարկա դրույթի վերլուծությունից հետևում է, որ.

նախ, տեղեկատվության աղբյուրի բացահայտումը կարող է պարտադրվել միայն դատարանի որոշմամբ,

երկրորդ, այն կարող է իրականացվել միայն քրեական գործի առիթով,

երրորդ, նպատակը պետք է լինի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտումը,

չորրորդ, հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ պետք է լինի, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը,

հինգերորդ, պետք է սպառված լինեն հասարակական շահերի

²¹ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf>

պաշտպանության մնացած բոլոր միջոցները:

Վեճի առարկա նորմի իրավական բովանդակությունից հետևում է, որ նշված միայն բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայությունն է հիմք հանդիսանում տեղեկատվության աղբյուրի բացահայտման պարտադրանք կիրառելու համար»²²:

Բացի դրանից Սահմանադրական դատարանը հստակորեն ամրագրել է, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է այն բանին, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից էլնելով՝ տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար: Այդ իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն կարող է իրավաչափ հիմք դառնալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրություն նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար»²³:

АРПИНЕ ОВАННИСЯН – Защита журналистских источников информации. – Статья посвящена защите журналистских источников. В ней исследуются основные международные инструменты и документы по защите журналистских источников. Кроме того, рассматривается защита источника журналиста с разных сторон: предоставление материала, требование журналиста давать показания в суде, обыски в СМИ, слежка за частными домами журналистов. В статье большое внимание уделяется передовому международному опыту защиты журналистских источников; так, в статье анализируются стандарты Международного трибунала по Югославии по защите журналистских источников, знаменитый критерий Вигмора, применяемый в Канаде, а также опыт Словении, Италии, Швеции и других стран по защите журналистских источников. В статье также освещается прецедентное право ЕСПЧ о защите журналистских источников. Ссылаясь на правовую систему Армении, в статье также подробно упоминаются позиции Конституционного суда Республики Армения в отношении защиты журналистских источников. Опираясь на передовой международный опыт, позицию Европейского суда по правам человека и решение Конституционного суда РА, в статье определяются несколько стандартов защиты журналистских источников в правовой системе Армении с учетом особой роли журналистов в демократическом обществе.

Ключевые слова: *свобода слова, журналист, журналистский источник, ЕСПЧ*

²² Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf>

²³ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf>

ARPINE HOVHANNISYAN – *The Protection of the Journalist's Sources.* –

The Article is dedicated to the protection of the journalist's sources. It explores the main international tools and documents for protecting journalists' sources. Moreover, the article observes the protection of the journalist's source from different dimensions: provision of material, requiring a journalist to testify in the court, searches of media organizations, and private homes of journalists' surveillance. In the article, great emphasis is placed on the international best practice in the protection of journalistic sources; thus, the article analyzes the standards of the International Tribunal of Yugoslavia on the protection of journalists' sources, the famous Wigmore test used in Canada, as well as the experience of Slovenia, Italy, Sweden and other countries in protecting journalists' sources. The article also highlights the ECHR case law on protecting journalists' sources. Referring to the Armenian legal system, the article also makes a detailed reference to the positions of the Constitutional Court of the Republic of Armenia regarding the protection of journalistic sources. Based on the international best practices, the positions of the European Court of Human Rights, and the decision of the RA Constitutional Court, the article defines several standards for the protection of journalistic sources in the Armenian legal system, taking into account the special role of journalists in a democratic society.

Key words: *freedom of speech, journalist's sources, journalist, ECHR*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՄԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սույն հոդվածի շրջանակներում քննարկվելու են հետևյալ իրավական խնդիրները.

Ուսումնադաստիարակչական գործառույթի հետ «անհամատեղելի արարք» եզրույթի մեկնաբանումը՝ պայմանավորված կրթություն և դաստիարակություն ստացող անձանց տարիքով.

Ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող անձի՝ աշխատանքը շարունակելու հետ «անհամատեղելի արարքի» դրսևորումները՝ պայմանավորված աշխատանքին առնչվելու և չառնչվելու հանգամանքով.

Վստահությունը կորցնելու հիմքով աշխատանքային պայմանագրի լուծման կարգը՝ պայմանավորված կարգապահական տույժ կիրառելու և չկիրառելու հանգամանքով:

Բանալի բառեր – *անհամատեղելի արարք, աշխատանքային պայմանագրի լուծումը, աշխատանքային պայմանագրի լուծումը վստահությունը կորցնելու հիմքով, ուսումնադաստիարակչական գործառույթ, աշխատանքային պայմանագրի լուծումն ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողների հետ*

I. Վերլուծություն

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերի մեջ օրենսդիրը ներառել է նաև աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու հիմքը, որի ինքնուրույն ենթահիմք է ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողի կողմից աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք թույլ տալը: Ի տարբերություն աշխատանքային պայմանագրի լուծման մի շարք այլ հիմքերի՝ այս հիմքն առանձնանում է որոշակիության բացակայությամբ և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս:

Խնդիրն այն է, որ.

ա. սահմանված չեն չափանիշներ, որոնց հիման վրա այս կամ այն արարքը կարող է անհամատեղելի դիտվել ուսումնադաստիարակչական գործառույթի հետ,

բ. հստակեցված չէ «անհամատեղելի արարք» եզրույթի բնույթը, ինչով պայմանավորված՝ որոշակի չէ, թե արդյոք «անհամատեղելի արարքը» պետք է դրսևորվի աշխատանքային ժամերին կամ ուղղակիորեն

առնչվի աշխատանքային պարտականությունների կատարմանը, թե այն կարող է որևէ կերպ ուղղակիորեն չառնչվել անձի աշխատանքին և/կամ առնչվել նրա մասնավոր կյանքին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետը սահմանում է՝ *Գործատունը իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում:*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է՝ *Գործատունը իրավունք ունի սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը վստահությունը կորցրած աշխատողի հետ, եթե 2) ուսումնադաստիարակչական գործառույթներ իրականացնող աշխատողը թույլ է տվել տվյալ աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի արարք:*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է՝ *Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը. 3) սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ, 13-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:*

Օրենսդիրը խիստ անորոշ է ձևակերպել ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող անձի հետ աշխատանքային պայմանագրի լուծման վստահությունը կորցնելու հիմքը՝ այն կապելով աշխատողի կողմից աշխատանքը շարունակելու հետ «անհամատեղելի արարք» կատարելու հետ: Ինչպես արդեն նշել ենք, որևէ կարգավորում սահմանված չէ ոչ միայն այն մասին, թե ինչ բնույթ պետք է կրի այդ արարքը, օրինակ՝ լինի հակաիրավական, կամ խախտի բարոյականության նորմերը, այլ նաև այն մասին, թե ինչ շրջանակներում պետք է դրսևորվի այն (օրինակ՝ որևէ ձևով առնչվի աշխատողի աշխատանքային գործունեությանը կամ վերաբերի նաև աշխատողի անձնական կյանքին):

Ուսումնասիրելով տարբեր երկրների փորձը՝ կարող ենք արձանագրել, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներ կատարող անձի հետ աշխատանքային պայմանագրի լուծման հավելյալ հիմքեր սահմանվում են շատ երկրներում: Օրինակ՝ Ղազախստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել դաստիարակչական գործառույթ իրականացնող այն աշխատողի հետ, ով կատարել է աշխատանքը շարունակելու հետ անհամատեղելի անբարոյական արարք¹: Ղրղզստանի աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածը նույ-

¹ Տե՛ս https://online.zakon.kz/document/?doc_id=38910832&pos=1210;14#pos=1210;14 (22.07.2022)

նաբովանդակ դրույթ է նախատեսում²:

ՈՒԴ աշխատանքային օրենսգրքի 81-րդ հոդվածի 8-րդ ենթակետը սահմանում է, որ աշխատանքային պայմանագիրն ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողի հետ կարող է լուծվել նրա կողմից աշխատանքը կատարելու հետ անհամատեղելի անբարոյական արարք կատարելու դեպքում³:

Վերը նշված պետություններում «անհամատեղելի արարքի» շրջանակները ուրվագծվել են բարոյականության համատեքստում, ինչը, անշուշտ, ինչ-որ առումով որոշակիացնում է արարքի գնահատման հնարավորությունը, սակայն, միևնույն է, չի կարգավորում այն հարցը, թե արդյոք այդ ենթադրյալ անբարոյական արարքը պետք է դրսևորվի աշխատանքի վայրում և աշխատանքային ժամերին կամ այլ կերպ առնչվի ուսումնադաստիարակչական գործառույթին:

Բացի այդ, թեև բարոյականության չափանիշով ուսումնադաստիարակչական արարքի հետ անհամատեղելի արարքի մեկնաբանությունը ինչ-որ առումով սահմանափակում է վերջինիս կիրառման շրջանակները, այդուհանդերձ ստեղծում է մեկ այլ անորոշ հարթակ բարոյական արժեքների մեկնաբանման տեսանկյունից:

Իրավունքի տեսության մեջ բարոյականությունը բնորոշվում է որպես բարու և չարի, պատվի և արժանապատվության, արդարության և պատասխանատվության, հասարակական օգտակարություն կամ վնասակարություն ունենալու վրա հիմնված վարքագծի կանոն⁴: Մեր համոզմամբ՝ բարոյականությունը միանշանակ բովանդակություն չունեցող կատեգորիա է, և նույն արարքը կարող է բարոյական կամ անբարոյական համարվել՝ պայմանավորված այն բանով, թե որ հասարակությունում կամ պետությունում է մեկնաբանվում, բացառությամբ անբարոյականության այնպիսի ծանր դրսևորումների, որոնք հանընդհանուր պարավանքի են արժանանում (մանկապղծություն, կավատություն և այլն):

Այս առումով, թեև առաջին հայացքից թվում է, որ բարոյականությունը որպես անհամատեղելի արարքի գնահատման չափանիշ սահմանելը ուրվագծում է վերջինիս մեկնաբանության սահմանները, սակայն դրան զուգահեռ՝ այն մեծ անորոշություն է պարունակում: Անգամ նույն հասարակության մեջ և նույն համայնքում ապրող երկու անձինք կարող են տարբեր մոտեցումներ ունենալ նույն արարքի բարոյական կամ անբարոյական լինելու հարցում:

² Տե՛ս <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/1505>(22.07.2022)

³ Տե՛ս <https://rulaws.ru/tk/CHAST-TRETYA/Razdel-III/Glava-13/Statya-81/> (22.07.2022)

⁴ Տե՛ս *Общая теория государства и права: учебник / под ред. С.Ю. Наумова, А.С. Мордовца, Т.В. Касаевой. – Саратов: Саратовский социально-экономический институт (филиал) РЭУ им. Г.В. Плеханова, 2018, էջ 110:*

➤ *Ուսումնադաստիարակչական գործառույթի հետ «անհամատեղելի արարք» եզրույթի մեկնաբանումը պայմանավորված կրթություն և դաստիարակություն ստացող անձանց տարիքով:*

Օրենսդիրը տարիքային որևէ տարբերակում չի դրել ուսումնադաստիարակչական գործառույթի շահառուների հարցում:

Ակնհայտ է, որ կրթություն և դաստիարակություն ստացող անձինք առավելապես երեխաներն են, սակայն բարձրագույն կրթություն ստանալու շահառուներն են նաև 18 տարին լրացած անձինք:

Քանի որ երեխաների դեպքում զուգակցվում են երեխայի լավագույն շահը աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետ, մեր համոզմամբ՝ այս հարաբերակցության դեպքում պետք է նախապատվությունը տրվի երեխայի լավագույն շահին, իսկ ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող անձի վարքագծին պետք է ներկայացվեն առավել խիստ պահանջներ:

Այն դեպքերում, երբ ուսումնադաստիարակչական գործառույթի շահառուները չափահաս անձինք են, կարծում ենք՝ մոտեցումը աշխատողի վարքագծին կարող է լինել համեմատաբար մեղմ:

Օրինակ՝ երեխաներին կրթող աշխատողների դեպքում, մեր կարծիքով, ուսումնադաստիարակչական գործառույթի հետ անհամատեղելի է ցանկացած արարք, որը կարող է վնասել երեխայի անձին և դրսևորվել նրա նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնությամբ:

Եթե ֆիզիկական բռնության դրսևորումները խիստ տեսանելի են և զուգորդվում են կրթություն ստացող անձին ցավ պատճառելու հետ, ապա նույնը չէ հոգեկան բռնության դեպքում:

Ըստ Ս. Բ. Ֆեկլինի՝ հոգեկան բռնություն է համարվում սովորողի հոգեկանի վրա բացասական ազդեցությունը, որը նրան բարոյական տառապանք է պատճառում (վիրավորանքը և նսեմացնող վերաբերմունքը, նվաստացումը, երեխայի նկատմամբ բացահայտ անբարյացակամ վերաբերմունքը և մշտական քննադատությունները, սպառնալիքները, երեխային ֆիզիկապես կամ սոցիալապես կանխամտածված մեկուսացնելը, սուտը և մեծահասակի կողմից խոստումները չկատարելը և այլ ներգործությունը, որը երեխայի մեջ առաջացնում է հոգեկան խանգարում)⁵:

Աշխատանքով պայմանավորված անհամատեղելի արարքները պարտադիր չէ, որ դրսևորվեն այս կամ այն աշակերտի կամ ուսանողի նկատմամբ: Ուսուցիչը կարող է, օրինակ, դասի ժամին վիրավորական արտահայտություններ անել մեկ այլ ուսուցչի կամ անձի նկատմամբ, որը, մեր համոզմամբ, նույնպես չի կարող համատեղելի լինել ուսումնադաստիարակչական գործառույթի հետ, քանի որ առնվազն վատ օրինակ է և հեղինակազրկում է ուսուցչին, որպիսի պարագայում

⁵ Ст' у Фелкин С. И. Дополнительные основания увольнения педагогического работника по инициативе работодателя.// Экономика образования. № 2, 2013, էջ 40:

դժվար է պատկերացնել նրա կողմից կրթական գործառնության իրականացումը:

Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ առանձին դեպքերում խիստ խնդրահարույց է նաև «անհամատեղելի արարք» կամ «անբարոյական արարք» կատեգորիայի մեկնաբանումը:

Օրինակ՝ Վ. Ռասպուտինի «Ֆրանսերենի դասեր» պատմվածքում 11 տարեկան երեխան հետպատերազմյան ժամանակաշրջանում գալիս է սովորելու մարզային կենտրոնում: Երեխային անհրաժեշտ է մեկ ռուբլի գումար օրական մեկ բաժակ կաթ գնելու համար, որը խորհուրդ էր տվել բժիշկը: Ֆրանսերենի ուսուցիչը փորձում է օգնել երեխային՝ առաջարկում է ընթրել իր հետ. տեսնելով, որ երեխան հրաժարվում է՝ ուտելիք է ուղարկում դպրոց, տեսնելով, որ դա էլ չի ընունում՝ առաջարկում է գումարով խաղ խաղալ: Երեխան «հաղթում» է, սակայն դպրոցի տնօրենն իմանալով այդ մասին, ազատում է նրան աշխատանքից: Նշված պատմվածքում հնարավոր չէ միանշանակ ասել ուսուցչի վարքագիծը համապատասխանո՞ւմ է բարոյականության պահանջներին, թե՛ ոչ: Ուսուցչի կերպարն առանձնանում է բացառիկ հոգատարությամբ, կարեկցանքով և բարությամբ. միակ նպատակը, որ ուսուցիչը հետապնդել է, երեխային օգնելն է եղել և որևէ այլ՝ նրան գումար տալու ավելի արդյունավետ տարբերակ չի կարողացել գտնել: Մյուս կողմից՝ երեխայի հետ գումարով խաղեր խաղալը, անկախ նպատակից, նույնպես դժվար է համատեղելի համարել ուսումնադաստիարակչական գործառնության հետ: Այս դեպքում, կարծում ենք, ուսուցչի արարքն ամեն դեպքում անբարոյական վարքագիծ չի կարող համարվել:

Բացի այդ, թերևս բերված օրինակը գուցե չլիներ ուսումնադաստիարակչական գործառնության հետ անհամատեղելի արարք այն դեպքում, եթե ուսուցիչը լիներ ֆրանսերենի դասախոս բարձրագույն ուսումնական հաստատությունում և դասավանդեր բացառապես չափահաս անձանց:

Նույն կերպ չափահասների նկատմամբ ֆիզիկական և հոգեկան բռնության դեպքերն իրենց բնույթով և դրսևորման եղանակով տարբերվում են երեխաների նկատմամբ կիրառվող բռնությունից այն պարզ պատճառով, որ երեխայի և չափահաս անձի մոտեցումը և հակադրումը նույն արարքին խիստ տարբեր կարող են լինել:

Բոլոր դեպքերում, մեր համոզմամբ, նաև չափահաս անձանց կրթելու գործառնություն իրականացնող աշխատողներին պետք է ներկայացվեն խիստ պահանջներ, գուցե ավելի մեղմ, քան դրանք ներկայացվում են անչափահասների դեպքում, սակայն էականորեն ավելի խիստ, քան դրանք ներկայացվում են այլ աշխատողների դեպքում:

Օրինակ, եթե իրավաբանը կարող է մամուլով իրեն թույլ տալ քննադատության սահմաններն անցնող, առանձին դեպքերում վիրավորական կամ ոչ պարկեշտ արտահայտություններ, և դա իր հետ

կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համատեքստում որևէ կերպ չի կարող քննարկվել, ապա մեր համոզմամբ՝ այդ արարքը եթե դրսևորվի չափահասներին դասավանդող դասախոսի դեպքում, ապա, միևնույն է, պետք է լինի անհամատեղելի ուսումնադաստիարակչական գործառույթի հետ:

However, existing analyzes show that there is still no unified approach to copyright recognition of results created by artificial intelligence. It is difficult to document the simultaneous presence of all copyright conditions in these works. In some cases, they do not meet the requirement of human authorship, and more often, it is not clear whether artificial intelligence can demonstrate creativity and the work be original. Trying to abstract from the idea of creativity and following the approach adopted by Great Britain, the possibility of legal protection of the results created by artificial intelligence can be considered under the concept of "the person who organizes the creation of a work" applied by our legislation. Although the mentioned persons are not considered the authors of the work, their actions aimed at organizing the creation of the work

⁴¹ Supra note 20, p. 322;

⁴² Berne Convention for the Protection of Literary and Artistic Works amended on September 28, 1979 available at <<https://www.wipo.int/wipolex/en/text/283698>>

⁴³ Ciolino DS (1995) Moral Rights and real obligations: a property-law framework for the protection of authors' moral rights. *Tulane L Rev* 69:935–995

⁴⁴ Supra note 21, pp. 319–329;

⁴⁵ Rushton, M. The Moral Rights of Artists: Droit Moral ou Droit Pécuniaire?. *Journal of Cultural Economics* 22, 15–32 (1998). <https://doi.org/10.1023/A:1007454719802>

are subject to legal protection. Moreover, organizing the creation of a work also implies the performance of certain mechanical work, which is also present in the operations of artificial intelligence. The actions of both the programmer, the person providing the original data to the artificial intelligence, and the owner thereof are essentially aimed at taking the necessary measures to create the work. This or that result is born as a result of the combination of these means and the operation of the artificial intelligence algorithm, so the possibility of legal protection of the results created by artificial intelligence under that institution can be made a subject of discussion.

Summarizing, let's note that today artificial intelligence creates such works that, if created by humans, would inevitably be considered copyright works and would be subject to legal protection. They can have certain originality, and often a person himself cannot clarify the steps taken by artificial intelligence in the process of creating such works. Such works cannot fail to receive legal protection, because these results are ultimately created for the purpose of achieving a certain economic benefit, and it is necessary to prevent any illegal encroachment on them by providing legal measures. Under the currently existing regulations, the protection of such works under copyright has much vulnerabilities, so it is necessary to consider the possibility of legal protection of works created by artificial intelligence as objects of intellectual property within the framework of other legal regulations, including those referring to the persons organizing the creation of the work.

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՆՌԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ – Արհեստական բանականության ստեղծած արդյունքների նկատմամբ հեղինակային իրավունքը – Աշխատանքում քննարկվում են արհեստական բանականության ստեղծած աշխատանքները հեղինակային իրավունքի ներքո պաշտպանելու հնարավորությունը աշխատանքի հեղինակի, պաշտպանունակության պայմանների և պաշտպանության արդյունքում տրամադրվող իրավունքների տեսանկյունից: Այսօր արհեստական բանականությունը ստեղծում է այնպիսի աշխատանքներ, որոնք մարդու կողմից ստեղծված լինելու պարագայում անխուսափելիորեն կհամարվեն հեղինակային ստեղծագործություններ և ենթակա կլինեն իրավական պաշտպանության: Արհեստական բանականության ստեղծած արդյունքների նկատմամբ հեղինակային իրավունքի ճանաչման շուրջ դեռևս միասնական մոտեցում չկա, մինչդեռ այդ հարցի լուծումը կարող է ունենալ տեսական և գործնական կարևոր նշանակություն:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են ընդհանուր փիլիսոփայական, ավանդական-իրավական մեթոդներ: Հետազոտության համար հիմք են ընդունվել ինչպես իրավական աղբյուրներ («Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենք, Բեռնի կոնվենցիա, ՀՀ վճռաբեկ դատարանի, օտարերկրյա դատարանների դիրքորոշումներ), այնպես էլ գիտական աշխատություններ՝ հրատարակված գրքեր, գիտական հոդվածներ և այլն:

Հոդվածում բարձրացվել է իրավական այլ կառուցակարգերի, այդ թվում՝ ստեղծագործության արարումը կազմակերպող անձանց վերաբերյալ իրավակարգավորումների շրջանակներում արհեստական բանականության ստեղծած աշխատանքների իրավական պաշտպանության հնարավորության հարցը:

Բանալի բառեր – *արհեստական բանականություն, հեղինակային իրավունք, հեղինակ, ստեղծագործականություն, ինքնատիպություն, անձնական ոչ գույքային իրավունքներ, ստեղծագործության ստեղծումը կազմակերպող անձինք*

ԱՐՓԻՆԵ ՕԳԱՆԵՏՅԱՆ, ՆՈՒՆԵ ՍՈԳՕՏՅԱՆ – *Авторские права на результаты, созданные искусственным интеллектом.* – В статье рассматривается возможность охраны произведений, созданных искусственным интеллектом, в рамках авторского права с точки зрения самого автора произведения, условия охраны и права, предоставляемые в результате охраны. Сегодня искусственный интеллект создает произведения, которые, в случае их создания людьми, неизбежно считались бы авторскими произведениями и подлежали бы правовой охране. На результаты признания авторских прав, созданные искусственным интеллектом, пока что нет единого подхода, по крайней мере решение этого вопроса может иметь теоретическое и практическое значение. В ходе исследования были использованы общеправовые, традиционно-правовые методы.

Исследование основано как на правовых источниках (Закон об авторском праве и смежных правах, Бернская конвенция, позиции Кассационного суда РА, иностранных судов), так и на научных работах, изданных в книгах, научных статьях и т.д.

В статье рассматривается вопрос об иных правовых конструкциях, в том числе вопрос о лицах, организующих создание произведения, в рамках возможности правовой охраны произведений, созданных искусственным интеллектом.

Ключевые слова: *искусственный интеллект, авторское право, автор, творчество, оригинальность, личные неимущественные права, лица, организующие создание произведения*

ՄԵՌԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՌԱԿԱՆ
ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀՀ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ
ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ
ՏԻԳՐԱՆ ՄԻՄՈՆՅԱՆ

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների իրավակարգավորումներին առնչվող մի շարք վիճահարույց հարցերի ուսումնասիրությանը: Հոդվածի շրջանակներում համեմատական վերլուծության հիման վրա բացահայտվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք կարող են բացասաբար ազդել հանցագործությունների որակյալ գործընթացի վրա՝ խաթարելով իրավակիրառ գործունեության բնականոն ընթացքը: Հոդվածի շրջանակներում կատարվել են օրենսդրության լրանջակմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Մասնավորապես նշվել է, որ նոր օրենսդրությամբ միավորվել են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը, սակայն բռնաբարության վտանգավորությունն ավելի բարձր է, քան սեքսուալ բնույթի բռնի այլ գործողություններինը, և դրա առանձին նախատեսման հիմնահարցը բաց է մնում:

Փաստվել է, որ առավել քան տարօրինակ է սեռական հարաբերության նմանակումը՝ որպես սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման առանձնացումը: Սեռական հարաբերության նմանակումը կամ «իմիտացիան» առավել բնորոշ է երեխաներին, երբ վերջիններս փորձում են նմանակել իրենց ծնողների կամ այլ չափահասների սեքսուալ հարաբերությունները: Անդրադարձ է կատարվել նաև ծանրացնող հանգամանքների ոչ հաջող ձևակերպմանը, ինչի արդյունքում՝ քննարկվող հոդվածի իմաստով 12 տարին չլրացած անձը այլևս չի համարվում անօգնական վիճակում գտնվող:

Քննարկվել են «**առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի**» ձևակերպման խնդրահարույց տարրերը: Արձանագրվել է, որ կոնվենցիոն նորմերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցատեսակների արհեստական ներմուծումը մեր քրեական օրենսդրության մեջ, առանց դրանք տեղայնացնելու և առանց հաշվի առնելու ազգային օրենսդրության առանձնահատկությունները՝ կարող է ունենալ խիստ բացասական հետևանքներ:

Բանալի բառեր - մարդու սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակներ, ՀՀ նոր քրեական օրենսգրքը, բռնաբարություն և սեքսուալ բնույթի բռնի գործողություններ, սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, սեռական ներթափանցում, 12 տարին չլրացած անձ, համաձայնության ողջամիտ համոզմունք, մանկական պրոռնոգրաֆիա, գրոմփինգ

Պետք է նշել, որ ՀՀ նոր քրեական օրենսգիրքը բազմաթիվ դիտանկյուններից քայլ առաջ է՝ նախկին քրեական օրենսգրքի համեմատ: Բազմաթիվ ինստիտուտներ ենթարկվել են լրջագույն և արմատական փոփոխությունների, ընդ որում՝ ինչպես իմաստային, այնպես էլ լեզվատրամաբանական և եզրութային առումներով, ինչը, վստահաբար, կարող է հանգեցնել իրավակիրառ պրակտիկայի դյուրինացմանը և հանցագործությունների որակման գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Սակայն, ինչպես ցանկացած իրավական ակտ, օրենսդրական կարգավորում կամ մարդկային մտքի յուրաքանչյուր արգասիք, այն հեռու է կատարյալ լինելուց և հետագա շտկումներն ու փոփոխությունները ժամանակի հրամայականն են:

Այս համատեքստում հատկապես խնդրահարույց են թվում քրեական օրենսգրքում ներկայացված մարդու սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակների օրենսդրական նոր կարգավորումները, որոնք, իմ կարծիքով, կրում են խիստ վիճահարույց բնույթ և մոտ ապագայում ենթակա են խորքային լրամշակման:

ՀՀ-ում հանցավորությանը վերաբերող վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ ինչպես հանցավորությունն ընդհանրապես, այնպես էլ սեռական հանցագործությունները մասնավորապես վերջին տարիներին դրսևորում են աճի միտումներ, ինչը խիստ բացասական և մտահոգիչ գործընթաց է: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ սեռական հանցագործությունները ավանդաբար դասվում են առավել լատենտային հանցատեսակների թվին, ապա պատկերն իրոք ահագնացող է: Սակայն հարկ է փաստել, որ քննարկվող հանցատեսակների աճի միտումների, ընդհանուր հանցավորության կառուցվածքում դրանց տեսակարար կշռի կամ շարժընթացի ուսումնասիրությունը դուրս է սույն հոդվածի շրջանակներից, իսկ վերոնշյալ ընդհանրական դիտարկումն անհրաժեշտ է խնդրի հրատապությունն ընդգծելու առումով:

ՀՀ նոր քրեական օրենսգրքով անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցատեսակները ենթարկվել են արմատական փոփոխությունների: Նոր իրավակարգավորմամբ մի շարք հանցակազմեր ստացել են այլ ձևակերպումներ, միավորվել են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը, նախատեսվել է նոր հանցակազմ՝ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ)¹: Բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցատեսակների միավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բռնաբարությունը սեքսուալ բնույ-

¹ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց: Եվրոպայի խորհուրդ, Եր., 2022, էջ 287:

թի բռնի գործողության տարատեսակ է²: Սակայն հարկ է փաստել, որ տեսության մեջ նշվել է, որ բռնաբարության վտանգավորությունն ավելի բարձր է, քան սեքսուալ բնույթի բռնի այլ գործողություններինը, քանի որ բռնաբարությունը կարող է կատարվել բացառապես հատուկ սուբյեկտի՝ տղամարդու կողմից, ինչպես նաև կարող է առաջացնել հղիություն, տարբեր սեռավարակներ և այլն: Բռնաբարության բարձր վտանգավորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այն կարող է վտանգել կնոջ վերարտադրողական առողջությունը³: Այս համատեքստում հարկ է նշել, որ տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ զուգորդված սեքսուալ բնույթի բռնի գործողություններն օժտված են շատ ավելի բարձր հանրային վտանգավորությամբ, և դրանց համար պետք է սահմանվեն քրեաիրավական ներգործության առավել խիստ միջոցներ: Բռնաբարության առանձին հանցակազմից հրաժարումը պետք է դիտարկել որպես առաջադեմ քայլ, քանզի նշված հանցակազմի օրենսդրական սահմանումը, հատուկ սուբյեկտի առկայությունը և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հետ համանման սանկցիաների առկայությունը բռնաբարության առանձին հանցակազմի գոյությունը դարձնում էին աննպատակահարմար, հասկապես՝ հանցագործությունը հանցակցությամբ կատարելիս դրա որակման առնչությամբ առաջացող բազմաթիվ գործնական խնդիրների համատեքստում: Սակայն, հրաժարվելով բռնաբարության առանձին հանցակազմից, օրենսդիրը սահմանել է մի հանցակազմ, որն իր ձևակերպումների անտրամաբանական բնույթով և անորոշությամբ ուղղակի գավեշտալի է թվում:

Այսպես՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքում պատասխանատվություն է սահմանվում **սեքսուալ բնույթի բռնի գործողությունների համար**: Հոդված 198-ի առաջին մասի համաձայն՝ «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ **սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը**, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»: Ինչպես տեսնում ենք՝ այս հանցակազմում միավորվել են ինչպես բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերը, այնպես էլ բռնի կամ անօգնական վիճակն օգտագործելով ֆիզիկական անառակաբարո գործողությունների հանցակազմի կոնկրետ դրսևորումը, քանի որ որպես օբյեկտիվ

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս **Игнатов А.Н.** Особо тяжкие последствия изнасилования // Советская юстиция. 1968. № 10:

կողմի դրսևորում նախատեսվել է նաև սեռական կարիքները բավարարելը: Սակայն անառակաբարո գործողության հիշյալ դրսևորումը իր վտանգավորությամբ և բնույթով էապես զիջում է սեքսուալ բնույթի բռնի գործողություններին: Ակներև է, որ ներթափանցմամբ զուգորդված սեռական բռնությունն օժտված է ավելի բարձր հանրային վտանգավորությամբ: Օրենսդրորեն պետք է սահմանվեն այն հստակ չափորոշիչները, որոնց հիման վրա հնարավոր կլինի տարբերակել սեռական բնույթի բռնի գործողությունները և բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողությունները: Նման իրավակարգավորումը թույլ կտա կենսագործել իրավական որոշակիության սկզբունքը և կնպաստի հանցագործությունների ճիշտ որակմանը: Բանն այն է, որ սեքսուալ գիայում սեքսուալ բնույթի գործողությունների միասնական հասկացություն գոյություն չունի, դրանք կարող են լինել ամենաբազմազան բնույթի, իսկ քրեական օրենսդրության մեջ նման անորոշ հասկացության կիրառումն անընդունելի է⁴:

Առավել քան տարօրինակ է սեռական հարաբերության նմանակումը՝ որպես քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորման առանձնացումը: Սեռական հարաբերության նմանակումը կամ «իմիտացիան» առավել բնորոշ է երեխաներին, երբ վերջիններս փորձում են նմանակել իրենց ծնողների կամ այլ չափահասների սեքսուալ հարաբերությունները⁵: Այս սեռական վարքագծի դրսևորման ձևը որևէ աղերս չունի քննարկվող հանցատեսակի հետ, և պատահական, համատեքստից կտրված եզրույթների գործածումը ոչ միայն խախտում է օրենսգրքի ներքին տրամաբանությունը, այլև կարող է լրջագույն դժվարություններ առաջացնել իրավակիրառ գործընթացում: Որպես սեռական հարաբերության նմանակում կարող է հանդես գալ նաև ներթափանցմամբ չզուգորդված միջկոնկքային կոիտուսը⁶, ինչը ևս իր վտանգավորությամբ էապես զիջում է տուժողի մարմնի մեջ ներթափանցմամբ զուգորդված սեռական բռնությանը:

Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ տուժողի մարմնի մեջ ներթափանցմամբ զուգորդված սեռական բռնության համար սահմանվում է առանձին քրեական պատասխանատվություն: Այսպես՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի (գիրք II «Մարդու դեմ ուղղված հանցանքներ և զանցանքներ», բաժին II «Մարդու դեմ ուղղված ոտնձգություններ», գլուխ II «Անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության դեմ ուղղված ոտնձ-

⁴ Տե՛ս **Է. Կարապետյան**, «Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում»: Թեկ. ատեն. ժր.00.05 – «քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 2019, էջ 9:

⁵ Տե՛ս <https://www.krasotaimedicina.ru/diseases/children/sexualized-behaviour>

⁶ Տե՛ս Уголовное право. Особенная часть / Под ред. В.Н. Петрашева. М., 1999, էջ 93 – 94:

Տե՛ս նաև՝ https://www.investigative.am/images/grakanutyun/Dzernark_1.pdf

գություններ, մաս 3 «Մեռական ագրեսիաների մասին», առաջին պարագրաֆ) հոդված 222 – 23-ը սահմանում է բռնաբարության հասկացությունը՝ որպես ցանկացած **սեռական ներթափանցման** ակտ, ինչ բնույթ էլ որ այն ունենա, որը կատարվել է այլ անձի նկատմամբ՝ ֆիզիկական բռնություն գործադրելու, սպառնալիքի, հարկադրանքի կամ խաբեության միջոցով⁷: Իսպանիայի քրեական օրենսդրությամբ «Մեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ XIII բաժնի հոդված 179-ը պատասխանատվություն է սահմանում սեռական ագրեսիայի համար, որը կատարվել է օրալ կամ անալ ճանապարհով կամ որոշակի իրերի կամ առարկաների միջոցով տուժողի **մարմին ներթափանցելով**⁸: Նիդերլանդների քրեական օրենսգրքի հոդված 242-ի համաձայն՝ «Անձը, ով բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով, այլ գործողություններով կամ սպառնալիքներով ստիպում է ուրիշ անձի ենթարկվելու սեռական բռնության, որը ենթադրում է տուժողի մարմնի մեջ **սեռական ճանապարհով ներթափանցում**, մեղավոր է բռնաբարության համար և պատժվում է ոչ ավելի քան տասներկու տարի ժամկետով ազատազրկմամբ կամ հինգերորդ կատեգորիայի տուգանքով»⁹: Անգլիայի օրենսդրության համաձայն՝ բռնաբարություն է համարվում **տուժողի համաձայնության բացակայության պայմաններում սեռական ներթափանցումը**, երբ հանցավորը հաստատապես չի իմացել այդպիսի համաձայնության առկայության մասին¹⁰:

Իրավահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջադեմ իրավական համակարգ ունեցող մի շարք երկրներում տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ զուգորդված բռնության տեսակներին տրվում է առավել խիստ քրեաիրավական գնահատական:

Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում եմ ՀՀ քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և սեքսուալ բնույթի բռնի գործողությունները սահմանել հետևյալ կերպ՝ «Հոդված ... **Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները**

Տուժածի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ զուգորդված սեքսուալ բնույթի գործողությունները, որոնք կատարվել են վերջինիս կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով (բացառությամբ 12 տարին չլրացած անձի¹¹) պատժվում է...»:

⁷ Տե՛ս Новый Уголовный кодекс Франции / Под ред. Н. Ф. Кузнецовой, Э. Ф. Побегайло. М., 1993:

⁸ Տե՛ս Уголовный кодекс Испании / Под ред. Н.Ф.Кузнецовой, Ф.М.Решетникова. М., 1998:

⁹ Уголовный кодекс Голландии: 2-е изд. / Под ред. Б.В.Волженкина. СПб., 2001:

¹⁰ Տե՛ս Акт о сексуальных преступлениях, 2003, էջ 42:

¹¹ Այս դեպքը պետք է նախատեսվի որպես առավել ծանրացնող հանգամանք, իսկ

Անհրաժեշտ է սահմանել նաև բռնի անառակաբարո արարքի համար առանձին քրեական պատասխանատվություն: Նման առաջարկ արդեն իսկ կատարվել է հայրենական քրեական իրավունքի տեսության մեջ, և այն կարող է տեղայնացվել քրեական օրենսդրությամբ: Նշվել է, որ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև տուժողի անօգնական վիճակն օգտագործելով անառակաբարո գործողություններ կարող են կատարվել նաև չափահասների նկատմամբ, մինչդեռ առկա իրավակարգավորման պարագայում այդ արարքներին չի տրվում քրեաիրավական գնահատական: Առաջարկվում է հետևյալ խմբագրությամբ նոր հանցակազմ նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում. «Մեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ»՝ «Անառակաբարո արարքի կատարումը, որը չի զուգորդվել տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել է տուժողի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»¹²:

Ընդ որում, այս հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսևորումների մեջ կարող են ներառվել առկա իրավակարգավորմամբ նախատեսված սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը:

Հնդված 198-ի 2-րդ մասով սահմանվել են մի շարք նոր ծանրացնող հանգամանքներ: Դրանց մեջ առանձնանում է՝ «Մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ, նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ» որակյալ տեսակը: Նշված ծանրացնող հանգամանքն աչքի է ընկնում իր անորոշությամբ, հատկապես երբ խոսքը վերաբերում է **զուգընկերոջը կամ նախկին զուգընկերոջը**: Ինքնին հասկանալի է, որ այս դրույթի նախատեսմամբ փորձ է կատարվել ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել դեռևս չվավերացված Մտամբույան կոնվենցիայի¹³ դրույթներին: Մակայն ակներև է, որ կոնվենցիոն նորմերի «copy paste»-ը շատ վտանգավոր և անհիմն պրակտիկա է, քանզի առանց դրանք տեղայնացնելու և օրենսդրության համակարգին ինտեգրելու ունենում ենք մի վիճակ, երբ բնութով հոչակող, բնորոշում տվող և քրեաիրավական նորմի կառուցվածքի հետ որևէ առնչություն չունեցող նորմերն արհեստականորեն զետեղվում են քրեական օրենսդրության մեջ: Մասնավորապես՝ օրենսդ-

գործող իրավակարգավորումն անընդունելի է, ինչին կանդրադառնանք հետագա շարադրանքում:

¹² Է. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 11:

¹³ Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին: Մտամբույ, 2011: <https://rm.coe.int/168046246d>

րորեն սահմանված չէ «գուզրնկեր» հասկացությունը. ի՞նչ պարբերականությամբ կամ ինտենսիվությամբ անձինք պետք է հանդիպեն կամ սեռական հարաբերություն ունենան, որպեսզի համարվեն գուզրնկերներ, արդյո՞ք մեկ սեռական ակտը, օրինակ մարմնավաճառի հետ, նշված անձանց դարձնում է գուզրնկերներ և այլն: Այս և համաբնույթ բազմաթիվ դիտարկումները գալիս են ապացուցելու, որ նշված նորմը չի կարող կենսունակ համարվել. գործող խմբագրմամբ և օրենսդրության հետագա լրամշակմամբ այս եզրույթները պետք է վերաշարադրվեն կամ տրվի «գուզրնկեր» հասկացության մեկնաբանությունը:

Քննարկվող հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքներից հատկապես ուշագրավ է 198-րդ հոդվածի 4-րդ մասը, որը սահմանում է. «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ (...): Նշված նորմն ամբողջությամբ խաթարում է քննարկվող հանցակազմի բնույթն ու կառուցվածքը և հրատապ լրամշակման կարիք ունի: Նախկին իրավակարգավորմամբ՝ անօգնական վիճակում գտնվող անձ էր համարվում նաև 12 տարին չլրացած անձը: Նոր իրավակարգավորմամբ, իմ կարծիքով, տեղի է ունեցել կոպիտ վրիպում, քանզի սույն հոդվածի իմաստով 12 տարին չլրացած անձը այլևս չի համարվում անօգնական վիճակում գտնվող: Այս իմաստով կիրառելի չէ նաև հոդված 3-ի 1-ին մասի կարգավորումը, որը սահմանում է «անօգնական վիճակում գտնվող անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը»: Ստացվում է, որ եթե, օրինակ, չափահաս անձը 10 տարեկան երեխայի համաձայնությամբ վերջինիս հետ սեռական հարաբերություն ունենա, դա չի կարող դիտվել որպես սեքսուալ բնույթի բռնի գործողություն: Այս բացթողումն անհրաժեշտ է հրատապ շտկել, քանզի այն կարող է անդառնալի հետևանքների հանգեցնել: Հարկ է նշել, որ նոր քրեական օրենսգրքի սկզբնական տարբերակում 12 տարին չլրացած անձը նախատեսված էր անօգնական վիճակում գտնվող անձանց շրջանակում, իսկ հետագա լրամշակմամբ (Կ-23289-11.04.2022-ՊԻ-011/1) այն անհիմն կերպով չի նախատեսվել:

Բանն այն է, որ հոդված 198-ի 5-րդ մասում նշվում է. «**Սույն հոդվածի իմաստով՝** անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը»: Ստացվում է, որ 12 տարին չլրացած անձն այս հոդվածի իմաստով չի համարվում անօգնական վիճակում գտնվող: Տրամաբանական հարց է ծագում՝ այս պարագայում ո՞րն է **սեքսուալ բնույթի բռնի գործողություն-**

նը (քրեական իրավունքի տեսության մեջ իսպառ բացակայում է բռնության հասկացությունը՝ կապված անձի տարիքային սահմանի հետ), երբ նշված անձի նկատմամբ սույն հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող որևէ արարք չի կատարվում: Քննարկվող օրենսդրական անհիմն կարգավորումը լրջագույն դժվարություններ կարող է հարուցել իրավակիրառ պրակտիկայում՝ հնարավորություն ընձեռելով նման «հրեշավոր» արարք կատարած անձանց խուսափելու քրեական պատասխանատվությունից: Վերն առաջարկված սույն հանցակազմի բնորոշման պարագայում՝ որպես ծանրացնող հանգամանք կարող է նախատեսվել «սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը 12 տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը, պատժվում է...», ինչը շատ ավելի համապարփակ և համեմատաբար անխոցելի իրավակարգավորում է:

Նոր քրեական օրենսգրքի հոդված 199-ի 1-ին մասը սահմանում է. «Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները (...):»:

Հարկ է նկատել, որ հոդված 198-ի վերլուծությամբ ներկայացված մի շարք նկատառումներ՝ կապված սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու հետ, արդիական են նաև սույն հոդվածի կապակցությամբ, ուստի դրանք կրկին վերլուծելու անհրաժեշտությունը բացակայում է: Նոր օրենսդրությամբ ընդլայնվել է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ համարվող արարքների շրջանակը, սեքսուալ բնույթի գործողությունների համատեքստում նշվել է նաև սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքների բավարարման մասին, իսկ նախկին իրավակարգավորմամբ սահմանված՝ «այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն» ձևակերպումը նոր օրենսգրքում չի օգտագործվել, քանի որ համասեռական գործողությունները ևս սեքսուալ բնույթի գործողություններ են, և դրանց առանձին շեշտադրման անհրաժեշտությունը բացակայում է¹⁴:

Բավականաչափ խնդրահարույց է քննարկվող հանցագործության կատարման նոր եղանակի նախատեսումը: Այսպես՝ բացի նախկին օ-

¹⁴ Տե՛ս ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, էջ 290:

րենսդրությամբ նախատեսված եղանակներից, հողված 199-ով նախատեսված արարքը կարող է կատարվել նաև **«առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի»**: Առանց անձի համաձայնության սեռական հարաբերությունները որոշ երկրների քրեական օրենսդրությամբ համարվում են բռնաբարություն: Մասնավորապես, ԱՄՆ օրենսդրությամբ սեռական հանցագործությունները բնորոշվում են որպես սեռական բռնության ցանկացած տեսակ, սեռական հարաբերություններ կամ վարք, որը տեղի է ունենում **առանց տուժողի հստակ համաձայնության**¹⁵: Անգլիական օրենսդրության համաձայն՝ բռնաբարություն է համարվում տուժողի **համաձայնության բացակայության պայմաններում** սեռական ներթափանցումը, երբ հանցավորը հաստատապես չի իմացել այդպիսի համաձայնության առկայության մասին¹⁶: Ուկրաինայի քրեական օրենսգրքի հողված 152-ի համաձայն՝ բռնաբարություն է համարվում...«Սեռական բնույթի գործողություններ կատարելը, որոնք կապված են սեռական օրգանների կամ որևէ այլ առարկայի միջոցով այլ անձի մարմին հեշտոցային, անալ կամ օրալ ներթափանցման հետ **առանց տուժողի կամավոր համաձայնության (բռնաբարություն)**»¹⁷:

Կարծում եմ՝ միանշանակորեն դրական պետք է համարել այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ՝ առանց տուժած անձի համաձայնության ողջամիտ համոզմունքի սեռական հարաբերությունը չի համարվում սեքսուալ բնույթի բռնի գործողություն, քանզի նշված արարքի և տուժածի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով, դրա սպառնալիքով կամ նրա անօգնական վիճակն օգտագործելով սեքսուալ բնույթի գործողությունների վտանգավորության տարբերությունն ակներև է, և որևէ համատեքստում դրանք չպետք է նույնացվեն: Մակայն ինդիքներ կարող են առաջանալ **«համաձայնության ողջամիտ համոզմունք»** ձևակերպման հետ, քանի որ այն բավականաչափ անորոշ է, դժվար է սահմանազատել, թե որ դեպքում է համոզմունքը ողջամիտ, իսկ որ դեպքում՝ ոչ, բացի այդ՝ հարցն ավելի է բարդանում, երբ խոսքը վերաբերում է քննարկվող հանցատեսակին, որը տեղի է ունեցել ամուսինների կամ զուգրնկերների միջև: Բարդ է նկարագրել այն դեպքերը կամ իրավիճակները, երբ անձը պետք է ստանա սեռական հարաբերություն ունենալու համաձայնություն, ինչ ձևով կամ եղանակով պետք է տրվի այդ համաձայնությունը, ինչպես այն պետք է «ամրագրվի» և այլն: Այս և մի շարք համաբնույթ հարցեր մնում են բաց, և դրանք պետք է համապատասխան ձևով մեկնաբանվեն կամ էլ պետք է կատարվի օրենսդրական փոփոխություն՝ քննարկվող հանցակազմն ավելի որոշակի ձևակերպելու համատեքստում: Կարծում եմ՝ արտա-

¹⁵ Տե՛ս <https://www.justice.gov/ovw/sexual-assault>.

¹⁶ Տե՛ս Акт о сексуальных преступлениях, էջ 42:

¹⁷ <https://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/razdel-1-4/>

սահմանյան երկրների իրավական մշակույթին բնորոշ, օտարածին՝ «**համաձայնության ողջամիտ համոզմունք**» ձևակերպումը պետք է հանել սույն հոդվածի դիսպոզիցիայից, կամ պետք է տալ դրա օրենսդրական հստակ բնորոշումը, ինչը, հաշվի առնելով վերոշարադրյալը, բավականին բարդ կլինի:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հոդված 202-ը պատասխանատվություն է սահմանում գրումինգի համար: Մասնավորապես՝ նշված հոդվածը վերնագրված է՝ «**16 տարին չլրացած անձին սեռական հարաբերություն կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծել կամ արտադրել առաջարկելը (գրումինգ)**»: Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ գրումինգի համար պատասխանատվություն հիմնականում նախատեսված չէ, և այս համատեքստում քրեորեն պատժելի է միայն երեխայի նկատմամբ սեռական հանցանք կատարելուն օժանդակելը¹⁸: Մակայն որոշ երկրներում, օրինակ՝ Ավստրալիայում¹⁹, Մեծ Բրիտանիայում²⁰, Շվեդիայում, Էստոնիայում²¹ և այլն, այն համարվում է հանցագործություն, ընդ որում՝ այս եզրույթի ներմուծումը հիմնականում կապված է Լանգարոտեի կոնվենցիայի դրույթների կենսագործման հետ²²:

Հոդված 202-ի 1-ին մասը սահմանում է. «Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ 18 տարին լրացած անձի կողմից 16 տարին չլրացած անձին հանդիպում առաջարկելը և հանդիպմանն ուղղված գործողություն կատարելը՝ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունների, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակման կամ սեռական կարիքները բավարարելու կամ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու կամ արտադրելու նպատակով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 189-րդ կամ 198-201-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները (...):»:

Այս նորամուծությունը տարակուսելի է, քանզի այս հանցատեսակի բացակայության պարագայում նման արարքը կորակվեր որպես ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն (Հոդված 239. Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու կամ տարածելու հետ կապված գործողություններ կատարելուն հակելը կամ ներգրավելը) կամ 189-րդ կամ 198-201-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների նախա-

¹⁸ Տե՛ս <https://www.whitelawpllc.com/blog/2022/february/is-grooming-a-crime/>

¹⁹ Տե՛ս <https://www.justice.vic.gov.au/safer-communities/protecting-children-and-families/grooming-offence>

²⁰ Տե՛ս <https://www.abvsolicitors.co.uk/sexual-offences/criminal-accusations-and-charges-of-sexual-grooming/>

²¹ Տե՛ս <http://www.assembly.coe.int/LifeRay/SOC/Pdf/DocsAndDecs/LanzaroteHandbook-RU.pdf>

²² Տե՛ս <https://rm.coe.int/prems-095719-arm-2576-lanzarote-convention-leaflet-a5-web/168097a5d9>

պատրաստություն, որը շատ ավելի խիստ է պատժվում, իսկ այս հատուկ նորմի ներմուծումն այդ վտանգավոր արարքների դեմ քրեաիրավական հարկադրանքի համապատասխան միջոցների կիրառման իրական խոչընդոտ կարող է դառնալ:

Ամենին դեմ չեմ միջազգային տարբեր պայմանագրերով սահմանված պետության պարտավորությունների կատարմանը, այդ նորմերի դրույթների իմպլեմենտացմանը հայրենական օրենսդրությամբ, ավելին այդ պարտավորությունները պետք է պատշաճ կատարվեն, քանզի դա իրավական պետության կերտման հիմնաքարերից է, սակայն այդ ամենը պետք է արվի հաշվենկատ և տրամաբանական կերպով, և եթե որևէ արարքի համար արդեն իսկ ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված է բավականաչափ խիստ պատասխանատվություն, ապա գուտ եզրութաբանական պատրանք ստեղծելու համար նոր հանցակազմերի նախատեսման կարիք բոլորովին չկա: Ինչպես վերն արդեն նշվեց՝ կոնվենցիոն նորմերի, ինչպես նաև արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցատեսակների արհեստական ներմուծումը մեր քրեական օրենսդրության մեջ, առանց դրանք տեղայնացնելու և առանց հաշվի առնելու ազգային օրենսդրության առանձնահատկությունները, կարող է ունենալ խիստ բացասական ազդեցություն և հանգեցնել անարդարացի ու անհիմն իրավակարգավորումների նախատեսմանը:

ТИГРАН СИМОНЯН – *Некоторые вопросы касающиеся новых право-регуляций преступлений против «половой неприкосновенности и половой свободы» по новому УК РА.* – Статья посвящена исследованию ряда спорных вопросов, связанных с правовым регулированием преступлений против «Половой свободы и половой неприкосновенности», предусмотренным новым Уголовным кодексом Республики Армения. В рамках статьи на основе сравнительного анализа выявлено множество проблем, способных негативно повлиять на процесс квалификации преступлений, нарушив нормальный ход правоохранительной деятельности. В рамках статьи дан ряд рекомендаций по изменению законодательства. В частности, было отмечено, что преступления изнасилования и насильственных действий сексуального характера объединены новым законодательством, однако опасность изнасилования выше, чем других насильственных действий сексуального характера, и вопрос о его отдельном закреплении остается открытым.

Констатировано, что более чем странно выделять «имитацию полового акта» как проявление объективной стороны преступления насильственных действий сексуального характера. Имитация полового акта чаще всего встречается у детей, когда они пытаются имитировать половые отношения своих родителей или других взрослых. Упоминалось также о неудачной формулировкеотягчающих обстоятельств, вследствие чего лицо, не достигшее 12-летнего возраста по смыслу обсуждаемой статьи, уже не считается находящимся в беспомощном состоянии.

Обсуждены проблемные элементы формулировки «без разумного согласия потерпевшего». Зафиксировано, что искусственное введение в наше уголовное законодательство конвенционных норм, а также преступлений, предусмотренных уголовным законодательством иностранных государств, без их локализации и без

учета особенностей национального законодательства может иметь весьма негативные последствия.

Ключевые слова: преступления против половой свободы и неприкосновенности человека, новый Уголовный кодекс РА, изнасилование и насильственные действия сексуального характера, имитация полового акта или удовлетворение половой потребности, половое проникновение, лицо, не достигшее 12-летнего возраста, уверенность в согласии, детская порнография, груминг

TIGRAN SIMONYAN – *Some Questions Regarding the New Regulations of Crimes Against "sexual inviolability and sexual freedom" by the New Criminal Code of the Republic of Armenia.* – The article is devoted to the study of a number of controversial issues related to the legal regulation of crimes against "Sexual freedom and sexual inviolability" provided by the new Criminal Code of the Republic of Armenia. Within the framework of the article, based on a comparative analysis, many problems have been identified that can negatively affect the process of qualifying crimes, disrupting the normal course of law enforcement activities. Within the framework of the article, a number of recommendations for changing the legislation are given. In particular, it was noted that the crimes of rape and sexual assault are united by the new legislation, but the risk of rape is higher than other sexual assault and the question of its separate fixing remains open.

It is stated that it is more than strange to single out "imitation of sexual intercourse" as a form of the sexual assault. Imitation of sexual intercourse is most common for children when they try to imitate sexual relations of their parents or other adults. Reference was also made to the unfortunate wording of aggravating circumstances, whereby a person who has not reached the age of 12 within the meaning of the article under discussion is no longer considered to be in a helpless state.

The problematic elements of the wording "without the reasonable consent of the victim" are discussed. It has been recorded that the artificial introduction of conventional norms into our criminal legislation, as well as crimes provided for by the criminal legislation of foreign states, without their localization and without taking into account the peculiarities of national legislation, can have very negative consequences.

Keywords: crimes against sexual freedom and inviolability, the new Criminal Code of the Republic of Armenia, rape and sexual violence, imitation of a sexual intercourse or satisfaction of a sexual need, sexual penetration, a person under 12 years of age, consent to sexual activity, child pornography, grooming

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Արմեն Ասատրյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ
Армен Асатрян – кандидат юридических наук, первый заместитель председателя палаты адвокатов Республики Армения, доцент кафедры теории государства и права и истории ЕГУ
Armen Asatryan – Candidate of Law, Associate Professor of the YSU Chair of History and Theory of State and Law, First Deputy Chairman of The Chamber of Advocates of RA
Էլ. փոստ՝ armen.asatryan@ysu.am
- 2. Սերգեյ Քոչարյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ
Сергей Кочарян – кандидат юридических наук, доцент кафедры теории и истории государства и права ЕГУ
Sergey Kocharyan – Candidate of Law, Associate Professor (Docent) of the Chair of the Theory and History of State and Law
Էլ. փոստ՝ s.kocharyan@ysu.am
- 3. Տաթևիկ Դավթյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, «One Planet Group» ընկերության իրավական և օրենսդրության համապատասխանության գծով փոխնախագահ
Татевик Давтян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ, Вице-президент по правовым вопросам и комплаенсу «One Planet Group»
Tatevik Davtyan – Candidate of Law, Associate Professor of the Chair of Civil Law YSU, Vice President, Legal and Compliance, «One Planet Group»
Էլ. փոստ՝ t.davtyan@ysu.am
- 4. Արփինե Հովհաննիսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ
Арпине Оганнесян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ
Arpine Hovhannisyanyan – Candidate of Law, Associate Professor at the Chair of Civil Law, YSU
Էլ. փոստ՝ arpine.hovhannisyanyan@ysu.am
- 5. Մանե Կարապետյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու
Мане Карапетян – кандидат юридических наук
Mane Karapetyan – Candidate of Law
Էլ. փոստ՝ mane.karapetyan@advocates.am

6. **Նունե Պողոսյան** – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի բակալավր
Нуне Погосян – бакалавр юридического факультета ЕГУ
Nune Poghosyan – Bachelor of the Faculty of Law, YSU
7. **Տիգրան Միմոնյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ
քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
Тигран Симонян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного
права ЕГУ
Tigran Simonyan – Candidate of Law, Associate Professor of the Chair of Crimi-
nal law, YSU
Էլ. փոստ tsimonyan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ THEORY OF STATE AND LAW ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

- Արմեն Ասատրյան* – Իրավունքի բացերի լրացման, վերացման հասկացությունը և դրանց հաղթահարման եղանակները 3
- Armen Asatryan* – Понятие заполнения, устранения пробелов в праве и способы их преодоления
- Armen Asatryan* – The Concept of Filling, Eliminating Gaps in Law and Ways to Overcome Them
- Սերգեյ Քոչարյան* – Իրավաօրինականության՝ որպես իրավական օրինականության հիմնարար սկզբունքի բաղադրատարրի համակարգային կառուցվածքը 20
- Sergey Kocharyan* – Системная структура правозаконности как элемента фундаментального принципа правовой законности
- Sergey Kocharyan* – Systemic structure of legality as a fundamental principle of legal legitimacy

ԲՎԱԲԱՅԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ГРАЖДАНСКОЕ ПРАВО CIVIL LAW

- Տաթևիկ Դավթյան* – Կողմնորոշվելով իրավական դաշտում. NFT-ի (անփոխարինելի նշանների) վերլուծությունը՝ ըստ ՀՀ օրենսդրության (անգլ.) .. 34
- Tatevik Davtyan* – Ориентируясь в правовом поле: анализ NFT (невозмозаменяемых токенов) в соответствии с законодательством Армении (англ.)
- Tatevik Davtyan* – Navigating the Legal Landscape: An Analysis of NFTs Under Armenian Law
- Արփինե Հովհաննիսյան* – Լրագրողի տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը 53
- Arpine Ovanhannisyen* – Защита журналистских источников информации
- Arpine Hovhannisyen* – The Protection of the Journalist's Sources
- Մանե Կարապետյան* – Աշխատանքային պայմանագրի լուծումը ուսումնադաստիարակչական գործառույթ իրականացնող աշխատողների հետ ... 66
- Мане Карапетян* – Расторжение трудового договора с работниками, выполняющими образовательные функции
- Mane Karapetyan* – Termination of Employment Contract with Employees Carrying out Educational Functions
- Արփինե Հովհաննիսյան, Նունե Պողոսյան* – Արհեստական բանականության ստեղծած արդյունքների նկատմամբ հեղինակային իրավունքը (անգլ.)..... 77
- Arpine Oghannesyen, Nune Poghosyan* – Авторские права на результаты, созданные искусственным интеллектом (англ.)
- Arpine Hovhannisyen, Nune Poghosyan* – Copyright in Artificial Intelligence Generated Results

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ
УГОЛОВНОЕ ПРАВО
CRIMINAL LAW

| | |
|---|------------|
| <i>Տիգրան Միմոնյան</i> – Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներին առնչվող մի շարք հարցեր..... | 88 |
| <i>Тигран Симомян</i> – Некоторые вопросы касающейся новых право-регулирующих преступлений против «половой неприкосновенности и половой свободы» по новому УК РА | |
| <i>Tigran Simonyan</i> – Some questions regarding the new regulations of crimes against "sexual inviolability and sexual freedom" by the new Criminal Code of the Republic of Armenia | |
| Տեղեկություններ հեղինակների մասին..... | 100 |
| Сведения об авторах | |
| Information about the Authors | |

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Novakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Асмик Есаян
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության՝ 19. 07. 2023: